



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հ. Բ. ԹԱՆՆԵՍԻՆԻ



Կարճիր



Կրկանվանք



ԴԵՏՅԱՆ 1930 ՅԵՐԵՎԱՆ




Գ. Ո. ՈԳԱՆԵԶՈՎ

A  $\frac{I}{8348}$

# ԿԱՐՄԻՐ ԱՐՇԱՎԱՆՔ

~~17719~~



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, — ՅԵՐԵՎԱՆ, 1930



ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՆԱԽԿԻՆ  
ՔԱՂԱՇԻԱՏԱՍԿԻՑ ՍՏՅՈՊԱ ԱՎԱԳՅԱՆԻ  
ՀԻՇԱՏԱԿԿՆ—ՆՐԱ ՎՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԿՈ-  
ՐԱՏՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Հր. № 1462:

Գրառեպվար № 6028 (բ):

Տիրամ 300

---

Գեորգիանի առաջին տպարան վարչարչապատում:  
Գառվեք № 164

## ՀԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ


Ամբողջ հորիզոնը բռնող ձյունապատ սարերը հանկարծ բռնկեցին պղնձադեղնագույն, տխուր վերջալուսով: Այդ պահին Ղարաքիլիսայի լայնատարած, մեծ ու սրածայր լեռների կատարներից խմբերով ու կենտ-կենտ դեպի յերկհարկանի մեծ տունը շարժվեցին Ղարաքիլիսայի պահակային զուամարտակի և կայազորի հրամքադակավոր: Հրամքադակավոր շարժվող ուրվագծերը սպիտակ ձյան Փոնի վրա հատու գծերով սևին ելին տալիս ամեն կողմ ցրված կետերի նման. Ղարաքիլիսայի կայազորի բոլոր զորանոցներից սև կետերը մրջյունների քարավանի նման սահում ելին դեպի նույն տեղը:

Ձմռան լեռեկոն այնպես հանգիստ եր ու խաղաղ, վոր նրանց վուտքերի տակ ճոճուացող ձյան ձայնը քաղքենիներին իմաց եր տալիս, վոր կայազորի ամբողջ հրամքավակավոր հավաքվում ե մի հույժ շտապ ու անհետաձգելի խորհրդակցության:

— Ես սալդաթներն ճւր են սըհենց վուադ հավաքվում,— հարցնում եր կուլակ Մացակի կինը իր հարևանուհի Սաբեթին:

— Չլի՞ գնում են ելի հացի վերջին մնացածն ել հավաքելու,— ահ առած սրտով նորից հարցրեց Մացակի կինը և ներս վագեց տուն իր ունեցվածքը թագցնելու, իսկ չքավոր Կարոյի կին Սաբեթը հոգով ուրախ

եր, վոր հարևանուհին եղպես վախենում ե, և մտածում եր.—Յերանի շուտով գան ու նրա ունեցածը բոլորը տանեն, քանի դեռ չի կարողացել թագցնել:



Իսկ հրամքադկազմը տեղեկութիւն անգամ չունենալով չերկու հարևանուհիների հուզման մասին, արագ քայլում եր, աշխատելով վորքան կարելի չէ շուտ հասնել խորհրդակցութիւնը:

Կարճ ժամանակ անցած, չերը դուրսը բոլորովին մթնեց և Ղարաքիլիսայի քաղքենիները խորքուն մտան, Ղարաքիլիսայի պահակաչին գումարտակի քաղպարապմունքի տեղը լեփ լեցուն եր աղմուկով զրույց անող հրամքադկազմով: Իրար խառնված հըրամկազմի վիճալանութիւն ձայներից գումարտակի շտաբի շինքը դողում եր: Մեկը մի բան եր ասում, մյուսը մի ուրիշ, չերրորդը չերկուսին ել խլացնում

եր. ուղղակի կարծես շուկա լիներ. այնքան ելին ծխել, վոր ծխի մշուշի մեջ դժվար ելին ճանաչում իրար:

Այդ իրարանցման ու աղմուկի մեջ հազիվ թե հնարավոր լիներ մի բան լսել:

Գումարտակի համհարզը, մի լերեսուն տարեկան, բարձրահասակ, արծվաքիթ տղամարդ, ցուցակով ստուգեց բոլոր ներկա չեղողներին, ու ձեռքը գլխարկին դնելով, ամբողջ կազմի ներկա լինելու մասին ղեկուցեց կիսազինվորական զգեստով մի մարդու, վորն աննկատելի կերպով բազմութւան միջից անցնելով, կանգնել եր անկյունում կախած քարտեզի մոտ:

Դա ապստամբական ջոկատի պատասխանատու ղեկավար ընկ. Լազյանն էր: Համհարզի ղեկուցումն ընդունելուց հետո ընկ. Լազյանը դանդաղ ամբիոն բարձրացավ:

Կոճակները բաց արավ, ձեռքով շփեց իր լայն ձակատը և լռեց:

Նրան տեսնելով, մենք բոլորս քարացանք, սպասելով, թե ի՞նչ պիտի ասի մեզ Հայաստանի Ձինվորական Կոմիսարի տեղակալը: Այնպիսի լռութուն տիրեց, վոր շտաբի պատուհանի տակից անցնողների քայլերը շատ սլարդ կերպով լսվում ելին: Ընկ Լազյանը բոպեյական լռութունից հետո ուղղվեց, գլխի ազատ շարժումով գանգուրները յետ շարտեց, աչքերը կկոցեց, հալացքը հառեց դեպի դահլիճը և հաստատուն ձայնով, առանց հուզվելու սկսեց.

— Ընկեր հրամանատարներ յե՛վ Բաղաժառանգ-  
ներ. Ձեզ շատ լավ հայտնի յե, թե Լոռու պրոլե-  
տարիատը ինչպես է տանջվում և մղկտում ազնվա-

կաննների, իշխանների և նրանց լակեյ մենշևիկների մորակի տակ: Վրացի մենշևիկները «դեմոկրատական» կառավարութեան մեջ թագավորում և լիակատար կամայականութեան, անիշխանութեան. այնտեղ իշխանները, ազնվականները, սպեկուլյանտներն ու կուլակային տարրերը տմարդորեն ճնշում և շահագործում են աշխատավորներին: Աշխատավոր մասսաները ձգտում են ազատվել այդ ճնշումներից, մենշևիկները լծից, բայց առանց դրսի ոգնութեան նրանք չեն կարող անել այդ: Մեր կուսակցութեանը, պրոլետարիատի կուսակցութեանը, կոչված և ոգնելու մենշևիկների ճիրաններում տառապող մեր լեղբայրներին: Վրաստանի «դեմոկրատական» հանրապետութեան մեջ ապրող աշխատավոր մասսաները մեզ ոգնութեան են կանչում: Մենք ապրում ենք նրանց հետ կողք-կողքի, մենք չենք կարող ձեռքներս ծալած նայել, թե տգիտութեան ու ճնշման թագավորութեան մեջ ինչպես են տանջում և սոսկալի շահագործման յենթարկում նրանց: Ապստամբական ջոկատի շտաբը վորոշել և այսօր, գիշերվա ժամը 2-ին ամբողջ չեզոք գոտում ապստամբութեանը բարձրացնել և հարձակման դիմել: Ահա, լսեցեք, թե ինչ և ասում հրամանը:

Ու ընկ. Լազյանքը կարգաց հրամանը, վորից հետո առանձին զորամասերի հրամանատարները ջոկ-ջոկ իմացան իրենց վրա դրված խնդիրները և ցրվեցին, յերթի պատրաստվելու համար:

## ՀԱՐՁԱԿՈՒՄ

Խորհրդակցութեանից հետո, I վաշտի քաղղեկ ընկ. Բաբլումյանի և հանգուցյալ Սոյոսյա Ավագյանի հետ գնացինք մեր վաշտը՝ յերթի պատրաստվելու:

— Ի՞նչ եք կարծում, ընկեր հրամանատար, արդո՞ք կհաջողվի՞ մեզ անվնաս գրավել Ջամանլիի կամուրջը, — թեքվելով դեպի ինձ, շշուկով հարցրեց Սուտպան:

— Համոզված չեղեք, — պատասխանեցի նրան: — Մենք այնտեղ լավ ուժեր ունենք, ինչպես Ստեփանյանն ու ուրիշները, նրանք թույլ չեն տա կամուրջը պայթեցնել:

— Ապա մենք ի՞նչպես պետք է աջակցենք, ո՞ժանդակենք նրանց այդ գործում, — հարցրեց ընկ. Բաբլումյանը:

— Շատ պարզ. մենք առաջ կշարժվենք ու կըմոտենանք Շահավիին, կբռնենք բոլոր տիրույ բարձունքները, ու յերբ ընկ. Ստեփանյանն իմաց կտա, վոր կամուրջն ապահով է, հարձակման կդիմենք ու կգրավենք կամուրջն ու Շահավին:

Այդ ժամանակ մենք մտանք մեր զորանոցի բակը:

Արդեն յերեկոյան ժամի 9-եր. մտանք վաշտի գրասենյակը և կանչելով վաշտի որապահին, հրամայեցի վաշտը վոտքի կանգնեցնել:

— Վեր կանց, — վորոտալից ձայնով աղաղակեց վաշտի որապահը: Վայրկենապես թախտերից վեր թըռան կարմիր-բանակալիներն ու սկսեցին շտապ հագնվել:

15 բոպելից հետո ամբողջ վաշտը, հրացանները ձեռքներին, շարք ելին կանգնել բակում: Սկսեցի շարքերը ստուգել, թե արդո՞ք բոլորն էլ զինվորական պաշար ստացել են, իսկ վաշտի մյուս ծայրում ընկ. ընկ. Ավագյանն ու Բաբլումյանը կարմիր-բանակալիներին հետ զրույց ելին անում հարձակման մասին:

Մեր գումարտակը կազմակերպված էր շատ շտապ. կարմիր բանակայինները վատ էլին հագնված մեկի հագինը մուշտակ էր, մյուսինը—բաճկոն կամ աշված չուխա: Բայց շնայած դրան, շնայած ձմռան սառնամանիքին, բոլորի դեմքերը զվարթ էլին ու խընդալից:

— Ձեք մրսում, ընկեր,—հարցնում եմ ամեն մեկին:

— Վոչինչ, ընկեր հրամանատար, մենշեկները դեմ կռվելով կտաքանանք,—ուրախ պատասխանում են տասնյակ ձայներ:

Արդեն ժամը ինն և կեսն էր, յերբ սկսեցինք բազկից փողոց դուրս գալ: Դասակները շարվում էլին միմյանց չետևից լուռ, առանց աղմուկի:

Քաղաքացիները չէին կարող չնկատել մեր վաշտի և ընդհանրապես ամբողջ զորամասերի գիշերային շարժումը: Շարունակ այստեղ ու այնտեղ բացվում էլին սառած պատուհանների փեղկերը, դուրս էլին ցցվում քնահատ դեմքեր ու զարմանքով նայում մեզ:

Ընկ. Բաբլումյանի և Ավագյանի հետ դիտում էլինք, թե ինչպես դասակները խնդուխտամբ շարքի յեն կանգնում: Հինգ բոպեյից հետո բոլոր դասակները հրամանատարները ղեկուցեցին, վոր պատրաստ են ճանապարհ ընկնելու:

Տրվեց հրաման.

— Զոկատ առ ջոկատ, աջ թևն առնջ, մամր:

Զոկատները, մեկը մյուսի չետևից, խճուղով հանգիստ շարժվեցին Վարդանլվի ուղղութամբ:

Այդ գիշեր մեր առջև խնդիր էր դրված Յեղարլվի վրայով իջնել դեպի յերկաթգիծը և անակնկալ,

առանց մի հրացան արձակելու, դրավել Փամբակ կիսակայարանը: Մարսափելի գիշեր եր. միայն ձյունն եր մեր վոտքերի տակ սպիտակին տալիս և նրանով եր, վոր նշմարում ելինք ճանապարհը: Ձյունը ճոճը. ոացնելով ուրախ-ուրախ առաջ ելինք գնում: Յեղարլվից ստիպված ելինք իջնել, վոր ձմեռ ժամանակը շատ դժվար եր. կարմիր-բանակալիները սայթաքում և գլխի վրա գլորվում ելին, մինչև վոր դեմ ելին առնում վորևե թփի կամ ծառի:

Վերջապես, մեծ դժվարություններով հասանք չերկաթգծին: Յերկաթուղուն հասնելով, մի փոքր հանգիստ առանք, վորպեսզի հետախուզներն այդ միջոցին հարկավոր տեղեկություններ բերեն: Տասը բոպե հետո, արշավի պահակի պաշտպանությամբ և նրա հետևից մենք հանգիստ առաջ շարժվեցինք:

Մեծ թոնելից դուրս գալուց հետո, հետախուզները տեղեկություն բերին, վոր իրենք հասել են Փամբակ կիսակայարանը և տեսել, վոր ապստամբները զբրավել են Փամբակը և ապարատի մոտ մեր մարդը նստած՝ խոսում և Շահալվի հետ. իսկ Շահալվում նստած մենչեթիկները չեն ել կասկածում, վոր դա մենք ենք ու առանց ձգձգումների պատասխանում են մեր բոլոր հարցերին:

Այս նորություններն իմանալով, մենք արագացրինք մեր քայլերը և գիշերվա ժամը 12-ին արդեն Փամբակ կիսակայարանումն ելինք: Փամբակում մեր գլխավոր ուղադրությունը կենտրոնացրինք Ջամանլվի կամուրջն անվնաս գրավելու խնդրին: Մենք գիտեցինք, վոր չեթե մեր կողմից մի փոքր անզգուշություն լինի, ու չեթե հակառակորդն իմանա մեր գոր-

քերի առաջխաղացումը—կամուրջն անպայման կպայ-  
թեցնի: Կամուրջի մասին ընկ. Ստեփանյանին հատուկ  
խնդիր եր տրված, վոր նախորոք մեզ տեղեկացնե-  
ր կամուրջի ամբողջութիան մասին, վորպեսզի մենք  
համարձակ հարձակման դիմելինք: Ամբողջ գիշերը, մին-  
չև ժամը յերեքը, մենք ստիպված ելինք անցկացնել  
Փամբակ կիսակայարանի հյուսիսային կողմն ընկած  
բարձունքների վրա: Հակառակի պես բուք բարձրա-  
ցավ, մանրահատ ձյուն եր փչում, մտնում ամեն տեղ,  
հալվում և առվակներ դառնալով, վազում մեր դիրքե-  
րից:

Կարմիր-բանակայիններն ամբողջ գիշերը չքնե-  
ցին. չնայած քիչ ճանապարհ ելինք անցել, բայց  
սաստիկ հոգնել ելինք, մանավանդ վոր տարվա շատ  
աննպաստ լեղանակին եր. և ճանապարհը վատ:

Կարմիր-բանակայինները սարի վրա, ձյունի ու  
բուքի մեջ չեյին կարողանում չերկար ժամանակ մի  
տեղ պառկել, վորովհետև ցուրտը թուլացնում եր վոս-  
կրները. մանավանդ վտտքերը շատ եյին մրսում: Վեր-  
ջապես տեղեկութուն ենք ստանում, վոր կամուրջն  
ապահով ե:

Փետրվարի 12-ին, բուքի միջով, գիշերվա ժամը  
յերեքին սկսեցինք իջնել սարից չերկաթգծի վրա՝  
դեպի Շահալի գնալու: Պետք ե շտապելինք, վորովհե-  
տև վախհնում ելինք, վոր յերրորդ վաշտը կարող ե  
նկատել մեր շարժումը, իսկ դա մեծ խոչնդոտ կհան-  
դիսանար Շահալին առնելու համար:

Առավոտյան, ժամը վեցին մոտ հասանք Չաման-  
լի կամրջին. գերեցինք կամրջի սահակախումբը և  
սակրավոր վաշտի մի սպայի, վորը դժոխային մեքե-

նայի մոտ կանգնած, մեզ տեսնելուն պես ուզում եր պայթեցնել կամուրջը: Առանց գնդակ արձակելու՝ մենշեկակական ամբողջ զորախումբը վերցրինք գերի:

Շահալին առնելով, առաջին հերթին գրավեցինք զինապահեստը, հանեցինք գնդացիները և վերջում արթնացրինք նրանց զորամասը իր խոր քնից: Մենշեկական սպաները ներքին սպիտակեղենով վազվզում և փնտրում ելին իրենց զինվորներին, առանց իմանալու, վոր նրանք վաղուց արգեն զինաթափ են արված:

Առավոտյան ժամի 7-ին գերիների ամբողջ զորասույունը յերկաթգծի հարթութւյան վրա շարք կանգնեցրինք, սպասելով ընկ. Լազյանի գալուն:

Ձորի մեջ, հեռու, ինչ վոր տեղ հնչեց շոգեկառքի խլացուցիչ սուլոցը:

— Շարքի՛,— աղաղակեց գումարտակի հրամանատարը և սկսեց շարք կանգնեցնել գերիներին: Քիչ անց Ջամանլի կամուրջի հարավային ծայրում յերևաց շոգեկառքը, վոր իր հետևից քարշ եր տալիս յերեք մարդատար վագոն:

Գնացքը մոտեցավ և փնչոցով կանգ առավ գերի զինվորների դիմաց:

Մի բոպե հետո մարդատար վագոնի սանդուխքի վրա յերևաց ընկ. Լազյանը. չնայելով ապստամբութւյան առաջին որվա խոշորագուն հաջողութւյանը և իր լավ տրամադրութւյանը, նա չափազանց գունատ եր, յերևում եր, վոր ամբողջ գիշերը անհանգիստ և անցրել:

— Ձգանտ,— հրաման տվեց գումարտակի պետը և մոտեցավ ընկ. Լազյանին, զեկուցում տալու: Վեր-

ջինս իջավ վագոնից ու իր շտարի ուղեկցութեամբ դանդաղ մոտեցավ մեզ: Գումարտակի հրամանատարի զեկուցումն ընդունելուց հետո, բարեկեց մեզ և ապա գերիններին: Հետո վրացերեն մի չերկար ճառ ասաց:

Ընկ. Լազյանի ճառից հետո, աթոռ բարձրացավ վոչխարի մորթե մեծ փափախը գլխին, գլուղական արխալուղը հագին, մեջքին մի թուկի կտոր կապած, տրեխավոր, խիտ ու շեկ մորուքով, մոտ քառասուն տարեկան մի մարդ: Մի խուրձ կապսուլու ձեռքին, նա սկսեց վրացերեն մի ճառ: Դա ընկ Ստեփանյանն եր, վոր այդ գիշեր մեծ վարպետութեամբ կտրել էլ զժոխային մեքենայի լարերն ու այդպիսով պայթելունից ազատել Ջամանլվի կամուրջը:

Կարճ միտինգից հետո, գերիններին պահակներով ուղարկեցինք Ղարաքիլիսա, իսկ մենք սկսեցինք պատրաստվել հարձակումը շարունակելու,—ամենից առաջ հոգ տանելով կարմիր-բանակայիններին կերակրելու մասին: Մեր բախտից, այդտեղ առատ մթերք կար: Մենշեիկյան զորքի խոհանոցները վայրկենապես վառվեցին և մերոնք գործի անցան՝ կերակուր պատրաստելու: Մենշեիկներից վերցրած պահեստում չեղած պարենը և զգեստը բաժանվեց դասակներին:

Քիչ հետո մոտեցավ զորամասի և մեր վաշտի միջև կապ պահպանող Բաղդասարը:

— Ընկ. հրամանատար, ձեզ կանչում են զորամասի շտաբում,—ասաց ինձ Բաղդասարը և շուռ գալով կրնկի վրա, նորից զնաց զորամասի շտաբը:

Հագուստների բաժանումը վերջացնելով՝ իսկույն զնացի զորամասի պետի վագոնը: Կուպելի դուռը կիսաբաց եր:

— Կարելի՞ք չե մտնել, — հարցրի:

— Մտե՛ք, — հողմած ձայնով պատասխանեց ընկ. Լազյանը: — Նստեցե՛ք: — Զինվորական քարտեզը բանալով, ընկ. Լազյանն ասաց.

— Տեղեկությունների համաձայն, Կարաուլ-Թափա՛յն բարձունքը բռնել են մենչեիկների ժողովրդական-գվարդիականները: Անհապաղ մի կիսավաշտ ուղարկեցե՛ք՝ հակառակորդին ենտեղից քշելու, գրավեցե՛ք այդ բարձունքը, վորից հետո կսպառեք առանձին կարգադրության:

— Ել առաջ չշարժվե՛ն, — հարցրից նրա կողքին նստած հրամանատարներից մեկը:

— Վհ՛չ, — պատասխանեց ընկ. Լազյանը ու դառնալով ինձ, ասաց.

— Ի դեպ, ընկեր հրամանատար, ծանոթացե՛ք ընկ. Նեմչենենկոյի հետ: Նա ռազմական շրջանի պետ է նշանակված և դուք, ձեր վաշտով, նրա տրամադրության տակ ե՛ք:

Զեռք տվի ընկ. Նեմչենենկոյին. նրա հետ միասին դուրս չեկանք վագոնից, չես գնացի կատարելու ապստամբական զորամասի պետի հրամանը:

Տասնուհինգ բոպե հետո, ընկ. Մամուլյանի դասակը և ընկ. Ուաբաշյանի կիսադասակը կիսավաշտի հրամանատար ընկ. Յարալովի հրամանատարությամբ ուղարկեցի՝ գրավելու Կարաուլ-Թափա բարձունքը:

Մենք դեռ ճաշը չեյինք վեջացրել, չերբ ինձ նորից կանչեցին ընկ. Լազյանի վագոնը: Հենց վոր ներկայացա, նա դարձավ ինձ ու ասաց.

— Նոր տեղեկություններ ենք ստացել, վոր Կարաուլ-Թափա բարձունքի վրա թշնամին մեծ ուժեր է

կենտրոնացնում, և կարծում հմ, վոր կիսավաշտը նը-  
րանց հաղթել չի կարող, ուստի մնացած կիսավաշտն  
ու ընկ. նեմչենենկոյի կիսավաշտն ել վերցրեք ու  
անհապաղ հարձակվեցեք. ինչ ել լինի՝ հենց այսոր  
քշեցեք թշնամուն Կարաուլ-Թափա բարձունքից և  
սպասեցեք իմ կարգադրութիանը: Ենտեղ կանգնած եր  
և ընկ. Նեմչենենկոն, վորի հետ միասին դուրս չե-  
կանք՝ կատարելու հրամանը:

ԿԱՐԱՈՒԼ-ԹԱՓԱ ԲԱՐՁՈՒՆՔԻ ՅԵՎ ԿՈՒՐԹԱՆԻ  
ԱՌՈՒՄԸ

Արդեն ժամը տասնուչորսն եր, չերբ մենք ճանա-  
պարհ ընկանք՝ ոգնելու մեր կիսավաշտին: Մեզ ար-  
դեն հայտնի չեր մեր գործողութիւնների ծրագիրը,  
դրա համար ել արագ առաջ ելինք շարժում:

Չնայած, վոր շատ ելինք շտապում, աշխատում ելինք  
շուտ-շուտ շարժել, խոշոր քայլերով գնալ, բայց և  
այնպես դանդաղ ելինք առաջ գնում, հետևյալ պատ-  
ճառներով. նախ՝ ճանապարհը ծածկված եր ձյունով  
և յերկրորդ՝ կարմիր-բանակայինները ամբողջ զիշերը  
չելին քնել, շարունակ շարժման մեջ ելին ու սաստիկ  
հոգնած:

Ժամը տասնուվեցին մենք բարձրացանք Շահավից  
հյուսիս ընկած բարձրութիւնը, չերբ հանկարծ Քո-  
լագիրանի կողմից մեծ բզեզի նման բզզաց ինքնա-  
թիւր:

— Պառկել, — կարգադրեցի չես:

Հենց նույն վայրկյանին մեր գլխի վրայով թռչում  
եր վորսի դուրս չեկած պողպատե թռչունը: Ինք՝ ա-

թիւը մեզ չնկատեց—շատ ցած եր թուում. չես գտա, վոր կարելի չե հարվածել նրան և հրաման տվի.

— Դասակ—կրակ:

Հնչեց խլացուցիչ համազարկը, ելի մի անգամ, չերրորդ անգամ, բայց իզուր: Ինքնաթիւը շուտ չեկավ և առաջ անցավ: Մենք վերկացանք և շարունակեցինք առաջ շարժվել:

— Լճին քայլերով, տղերք, պետք ե շտապ հասնել մեր ընկերներին ոգնութեան, թե չե ինքնաթիւը չուրայիններին կհաղորդի մեր շարժման մասին,— ասացի յես: Դեռ մի կիլոմետր ել չելինք անցել, չերր մեր ականջին հասավ հրացանների ու գնդացիների վորոտը: Մոտենալով Գոլագիրան գլուղին, տեսանք, վոր առաջուց ուղարկած մեր կիսավաշտը չետ ե նահանջում անկարգ կերպով:

Այդ տեսնելով, ընկ. Նեմչենենկոն հրամայեց ինձ չետ դառնալ, ամբողջ վաշտը ռազմական կարգի բերել, լուսադեմին հարձակման դիմել և թշնամուն քշել իր գրաված դիրքերից: Սկսեցի մտածել այս խնդրի մասին. դժվարանում եյի և չգիտեյի ինչ անեմ. վորովհետև մի կողմից ընկ. Լազյանքը հրաման տվեց— ինչ ել լինի թշնամուն քշել Կարաուլ-Թափայից, իսկ մյուս կողմից ընկ. Նեմչենենկոն, իմ անմիջական պետը, հրամայում ե չետ դառնալ: Կանգնել ու մտածում եյի, թե ինչ անեմ:

— Ես ինչի՞ չեք կանգնել, ընկ. հրամանատար,— ասաց կարմիր-բանակային Ներսեսը:— Մենչեիկները մեր առջև կանգ չեն առնի, չեկեք հարձակման դիմենք. նրանք հենց վոր մեզ տեսնեն, ձեռաց կփախչեն, մի գլուղա չել չեն գցիլ:

Նրա հետ համաձայն էլի, բայց չպիտեյի—ինչպես համոզեմ ընկ. Նեմչենենկոյին: Վերջապես, վորոշեցի հարձակվել, և թղթատարիս կանչելով, հետևյալ հրամանն ուղարկեցի ընկ. Յարալովին.

— Մեր վաշտին հրամայված է, ինչ էլ լինի, եսոր քշել թշնամուն կարաուլ-թափա բարձունքից և ամրանալ ալնտեղ: Վորոշել եմ յերեկոյան դեմ գրոհ տալ թշնամու վրա և տիրել կարաուլ-թափա բարձունքին: Հրամայում եմ ձեզ, անհապաղ ռազմական դրուժչան բերել վաշտը. և յերկրորդ՝ կիսավաշտը մոտենալիս, Քոլագիրան գլուղի հարավային կողմից հարձակման դիմել: Յես կհարձակվեմ հարավ-արևելյան կողմից, վորպեսզի կարաուլ-թափա բարձունքի արևելյան գագաթը դուրս գամ:

Ընկ. Նեմչենենկոն յերկար ժամանակ չեր համաձայնում իմ վորոշման հետ, վերջապես համոզվեց և մենք պատրաստվեցինք հարձակման:

Հրամանն ուղարկելով՝ շարունակեցինք առաջ շարվել: Յերբ Քոլագիրանին մոտեցանք, տեսանք, վոր թշնամին մեծ բազմությամբ հավաքվել է կարաուլ-թափա բարձունքի վրա: Մեր հակառակորդն արդեն նկատել եր մեզ, և սկսեց պնդացիրային կրակի տակ առնել: Այդ տարածության վրա մենք ռազմական կարգով ցրվեցինք: Թշնամին ճգնուժում եր կրակի տակ առնել մեզ, աշխատելով թուլլ չտալ, վորպեսզի մոտենանք իրենց: Հարմար դիրք բռնելով, սպասեցինք բուպելին և ժամը տասնութին մոտ հարձակման դիմեցինք:


Յերբ սարը բարձրացանք, թշնամին մեր դիմացն եր. մենք ջանք ելինք թափում այդ մեռած տարածու.

Թյամբ առաջ գնալ, ոգտվելով ամենափոքր թփիկնե-  
րից անդամ՝ թշնամու հայացքից թագնվելու համար:


Մինչև այդ, վաշտը դեռ տաք կովում չէր լեղել:  
Հրամկազմն ու կարմիր բանակայինները ձգտում էին  
առաջ թռչել. թշնամին մեղ աչքից չէր թողնում և  
շարունակ հրացանի և գնդացիների կրակ եր բաց անում  
մեղ վրա:

Առաջին կիսավաշտը հարձակվում էր այնպես՝ ինչ-  
պես հրամայված էր, չերկրորդ կիսավաշտն սկսեց մո-  
տենալ բարձունքի ամենաբարձր արևելյան գագաթին.  
ընկ. Նեմչենենկոն իր կիսավաշտով չերկրորդ հեր-  
թին էր գալիս:

Քարերի ու թփերի լեռն թագնված թշնամու առան-  
ձին հրաձիգները դժվարացնում էին մեր առաջխա-  
ղացումը:



Արդեն մթնել էր: Թշնամին շղալին կրակում էր.



նկատելի չի, վոր անհանգիստ և Աջ թևը վճռական հարձակման դիմեց և ժամը տասնուիննից չերեսուն բողբոջ անց մենք գրավեցինք Կարաուլ-Թափա բարձունքի արևելյան գագաթը: Այս մասին ՅարալովիՅ հայտնելով, հրամայում եմ, առանց ուշացնելու՝ հարձակվել: Դեռ թղթատարը սլանում եր Յարալովի մոտ, վոր մենք գրավեցինք ամբողջ բարձունքը: Թշնամիներ վիրավորներին թողնելով բարձունքի վրա՝ փախավ, առանց չետ նայելու:

Տեսնելով նրանց գլխակորույս նահանջը, վորոշեցի հարձակումը շարունակել: Նեմչենենկոն տատանվում եր և վճռական համաձայնութուն չեր տալիս. այն ժամանակ խորհրդակցեցի քաղղեկ Բաբլումյանի և Ավադյանի հետ, և վորոշեցի կանգ չառնել այստեղ, այլ հետապնդել թշնամուն:

Կանչելով դասակի հրամանատար ընկ. Մալումյանին, հրամայեցի անհապաղ, իր դասակի հետ ուղևորվել Կուրթանից հյուսիս գտնվող ձմեռանոցները (գոմերը) և նահանջող թշնամու ճանապարհը բռնելով, հնարավորութուն չտալ կանոնավոր նահանջի, իսկ չես վորոշեցի մնացած լերկու դասակների հետ գնալ Կուրթանի վրա:

Ընկ. Նեմչենենկոն չհամաձայնեց իմ ծրագրին, իր կիսավաշտի հետ չետ դարձավ Բոլագիրան. այնուհետև նրա հետ այլևս չհանդիպեցինք:

Ընկ. Մալումյանի դասակը ճանապարհ ընկավ՝ կատարելու իրեն հանձնարարված գործը, և նա անհայտացավ մթության մեջ, իսկ մենք դեռ կանգնած էյինք նույն տեղը և հիացմունքով լսում էյինք, թե ինչպես մենչևիկ գվարդիականները գլուխները կտորելով, խլացուցիչ վոռնոցով գլորվում էյին դեպիցած՝ դեպի Քյառքյառ շայ:

Կարաուլ-Թափայլի բարձունքից մենք տեսնում ելինք  
Կուրթան գյուղի ամբողջ շրջակայքը և Կուրթան  
գյուղը, վոր լուսավորված եր վառվող խարույկի բո-  
ցերով. իսկ այդ բոցերը մեզ ասում ելին, թե պետք  
ե հետապնդենք թշնամուն:

Մենք շտապեցինք այնտեղ, բայց կարճ ճանապարհ  
չգիտեցինք: Մեզ առաջնորդ եր հարկավոր. չնայած  
մարդ չգտանք, բայց և այնպես մենք սկսեցինք ցած  
իջնել:

Մենք իջնում ելինք մի հազիվ նկատելի շավղով,  
յերբ հանկարծ ծառերի լեռերից, կարմիր դրոշակը  
ձեռքներին մեր դեմ դուրս լեկան լերեք մարդ, վորոնք  
վողջունելով, կանգնեցրին մեզ:

Դրոշակակիրը՝ հին մաշված չուխան հագին, ահա-  
գին մորթե փափախը գլխին մի մարդ, առաջ լեկավ  
ու հարցրեց.

— Ընկերներ, թվ ե ձեր մեծը:

— Յես, — պատասխանեցի նրան և մոտենալով, հարց-  
րի.

— Ձեր գյուղում մենշեիկներ շատ կան:

— Շատվոր ելին, համա հմի վոր ձեզ տեհան, փախ-  
չում են Ձալալ-ողլի. թեզ արեք, հասեք նրանց, թե  
թե չե գեղումն ել չորսվոտնանի չեն թողնիլ, — հուզ-  
մունքով ասաց չուխավոր գյուղացին:

Լսյն քայլերով, մեզ վողջունող գյուղացիների հետ,  
առաջ շարժվեցինք:

Մենք առաջ ելինք գնում անտառով, մթության  
մեջ: Գլառգլառչայի մոտ միքիչ շեղվեցինք ճանապար-  
հից. թեև առաջնորդներ ունեցինք, բայց ելի ցած  
ելինք գնացել:

Այդտեղ դիմացի ավին այնքան ուղղաձիգ եր, վոր կարմիր-բանակայինները թփերից ու քարերից բռնելով՝ մագլցելով ելին բարձրանում:

Մենք դեռ հեռու ելինք կուրթանից, չերբ մեր ականջին հասավ համազարկերի և գնդացիների ճարձատուներ:

Նահանջող թշնամու հետ մեր դասակը կովի չեր բռնվել, մենք շտապում ելինք նրանց ոգնութան: Յիրբ գյուղը մտանք, գյուղացիք հեղափոխական լողունգներով ու հանդիսավորութամբ ընդունեցին մեզ, բայց ժամանակ չունեյինք նրանց վողջուններին պատասխանելու, վորովհետև շտապում ելինք կովի տեղը:

Յերբ կուրթանից դուրս չեկանք դեպի հյուսիս-արևմուտք, հրացանաձգութունն ընդհատվեց. մթութան մեջ տեսանք, վոր մեր դեմն են գալիս մի խումբ գվարդիական գերիներ. դրանք մոտ քառասուն հոգի էյին, վորոնց խիտ ողակով շրջապատած բերում եր ընկ. Մալումյանի դասակը: Նրանց մեջ մի քանի հոգի սպաներ ելին և քսանուրթ շարքային ժողովըրդական գվարդիական:

Սպաները սարսափով նայում ելին մեզ և սպասում իրենց վիճակին. բայց չերբ տեսան մեր վերաբերմունքը թե դեպի իրենց և թե դեպի գյուղացիները՝ հանգստացան: Գյուղ հասնելով, գերիներին տեղավորեցինք, պահակ դրինք և գնացինք հանգստանալու:

Մեր գյուղ մտնելը մի տոն եր գյուղացիների համար, մանավանդ նրանց, վորոնց անասունները չետ ելինք բերել:

Նրանք ամեն կողմից շրջապատեցին մեզ, հարցեր ելին տեղում մեզ վրա, հաց ելին բերում, կարտոֆիլ,

լուր, մի խոսքով՝ ով ինչ ունեւր—միայն թե կերակրեն իրենց բարերարներին: Մեզ համար մի շարք սենյակներ մաքրեցին, ոջախները վառեցին և ամեն կերպ աշխատում էին այնպես անել, վոր մեզ հարմար լինի:

Մենք դեռևս մեզ բոլորովին ապահով համարել չէինք կարող, ուստի թշնամու հարձակման փորձից խուսափելու համար, ընթրիքից հետո՝ գիշերվա կիսին դասակի հրամանատար ընկեր Մատուրովի գլխավորութամբ խուզարկուներ ուղարկեցինք Վարդաբլուր և Հոբարձի գյուղերի ուղղութամբ. նույն ուղղութամբ լերկու դաշտային պահակ ուղարկելով՝ պառկեցինք քնելու:

Փետրվարի տասներեքին գիշերվա ժամը յերկուսին ընկ. Մատուրովից տեղեկութիւն ստացանք, վոր թշնամին Վարդաբլուրը թողել է և տեղավորվել է Հոբարձի գյուղում: Բացի դրանից մեզ մոտ փախածների տվյալներից հայտնի չեր, վոր Գյուլագարակի շրջանում թշնամին ամրացնում է Գյուլագարակից հյուսիս ընկած բարձունքները:

Թեև այդ ուղղութամբ գործում եր միայն մեր վաշտը և մենք կտրված լինելով, դեկավարութիւն չէինք ստանում, այնուամենայնիվ խորհրդակցելով քաղղեկների ու Հեղկոմի անդամների հետ, գտանք, վոր համարձակ կերպով կարող ենք շարունակել մեր հարձակումը, քանի դեռ թշնամին ահաբեկված է մեր առաջին հաջողութիւններից: Մեր հարձակմանը նպաստում եր նաև այն հանգամանքը, վոր ազգաբնակչութիւնը աջակցում եր մեզ՝ տպստամրվելով թշնամու թիկունքում:


Հաջորդ առավոտը ժամը ութին մենք առաջ շարժվեցինք. Վարդաբլուրում միանալով Վերրորդ դասակի հետ, հարձակման դիմեցինք թշնամու վրա: Թշնամին Հոբարձում ամրացած, համառությամբ դիմադրում եր, ցանկանալով պահել գրաված դիրքերը: Վերջապես յերեկոյան դեմ թշնամին դուրս քշվելով իր դիրքերից ու շատ սպանվածներ ու ռազմամթերք թողնելով (մի բան, վոր մեզ շատ անհրաժեշտ եր), սկսեց նահանջել:

Ձինված գլուղացիները, լցվելով մեր շարքերը, աշխատում էին մեզ հետ ձեռք ձեռքի տված: Իր դիրքերը թողնելով, թշնամին սկսեց այնպիսի արագությամբ լետ քաշվել, վոր չեյինք կարողանում նրան հասնել: Վերջապես, Գլուղազարակի տակ թշնամին կանգ առավ և վորոշեց դիմադրել մեզ: Գրավելով 756 և 673 բարձունքները, վորոնք իշխող դիրք ունեյին Գլուղազարակի ամբողջ հովտի վրա, այլև Գլուղազարակի հարավային թաղամասը, նրանք սկսեցին կապարե անձրև թափել մեզ վրա:

Թշնամուն հետևելով, մենք գնում եյինք ցրիվ շարքով. բոլոր հրահանատարներն իրենց տեղերումն եյին. իսկ կարմիր-բանակայինները՝ հրացաններն ազատ բռնած, լուրջ դեմքերով, հանգիստ քայլով առաջ եյին գնում: Դեռ Գլուղազարակին չհասած, մի կիլոմետր տարածության վրա — Գլուղազարակի հարավային մասից, թշնամին կանգնեցրեց մեզ:

Մենք պառկեցինք և մեր հերթին կրակ բացինք ճարտար կերպով ծածկված թշնամու վրա: Իսկապես

ասած, կրակում ելին կենտ-կենտ և այն ել այն դեպ-  
քում, չերբ լավ նշանառում եր լինում: Իր անվրեպ  
հարվածով հատկապես աչքի չեր ընկնում չերկրորդ



դասակի կարմիր-բանակային Գրիգորյանը. նա չերբեք  
չեր վրիպում, հենց վոր մի շարժում եր նկատում,  
խսկուչն մեխում եր շարժվողին իր տեղում:

Գրիգորյանն իր քաջութիւնը ցուլց տվեց հատկա-  
պես նրանով, վոր ոգտվելով վրա հասնող մթութիւ-  
նից, թշնամու շղթայի միջով անցավ ու նրանց թի-  
կունքում գլուղացիներին զինված մի խումբ կազմե-  
լով, սկսեց կրակել գլուղի ծայրում ամրացած թշնա-  
մուն թիկունքից: Թշնամին տեսնելով իր անյելանելի  
դրութիւնը, սկսեց Գլուղաբարակից լետ քաշվել, վա-  
խենալով, վոր այդ գլուղում զինաթափ կլինի:

Գլուղաբարակը, ու հետո 756 և 673 բարձունքները  
հանձնելով, թշնամին սկսեց անկարգ կերպով նահան-  
ջել դեպի Զալալ-Ողլի:

Յերբ մենք Գյուլագարակ մտանք, մեր լետևից հասավ 20-րդ դիվիզիայի հեծգունդը: Ոգտվելով մեծութունից, մենք հեծգնդի հետ միասին սկսեցինք հետապնդել շփոթված ու անկարգ նահանջող թշնամուն: Մեր վաշտը մնաց Գյուլագարակում թշնամու թողած ավարը հավաքելու, իսկ հեծգունդը սկսեց հետապնդել թշնամուն, ձգտելով նեղը գցել միշտ փախչող թշնամու թիկունքի զորամասերին: Գյուլագարակում մեր ձեռքն ընկան բազմաթիվ ծանր ու թեթև գնդացի-րներ: Վորովհետև փոխադրական միջոցներ չունեցինք, ծանր գնդացի-րները թողինք գլուղի հեղկոմի պատասխանատվության տակ, իսկ թեթևները վերցրինք հետներս:

Հեծգունդը մեր առաջնն էր, և մենք հանգիստ կերպով Գյուլագարակից գնում ելինք, կարելի յե ասել, հանդիսավոր մարշով: Մեզ վոչ վոք չեր անհանգըստացնում և վոչ վոք չեր կանգնեցնում: Նովո-Նիկոլայիվկա հասնելով, մենք տեղի բնակիչներից իմացանք, վոր հեծգունդն արդեն գրավել և Ջալալ-Ողլին և թշնամուն շարտել ե վարանցովկայի կողմը:

Արդեն բոլորովին մութն էր, չերբ մտանք Ջալալ-Ողլի (այժմ Ստեփանավան): Ամեն տեղ մեր լերևալը ընդհանուր տոնախմբության նշան էր. բնակչությունը, փողոցները դուրս չեկած, սրտանց ընդունում էր մեզ:

Վաշտը տեղավորելով, չես գնացի հեծգնդի շտաբը փնտռելու: 16 տարեկան մի պատանի ցանկություն հայտնեց առաջնորդել ինձ դեպի շտաբ:

— Մենչեկները թալանեցի՞ն ձեզ, — հարցնում եմ նրան:

— Այո, լեթե մի քիչ ել ուշանալիք, նրանք, հավանական ե, վնչ միայն կթալանելին մեզ, ալլե կկոտորելին:

Ասում ե նա և ցույց ե տալիս իր աջ ալտի վրա գտնվող սպին:

— Եզ ինչ՞ա համար են քեզ եզ պատվին արժանացրիլ, - հարցնում եմ նրան:



— Նրա համար, վոր ինձ մատնել եյին, թե լես կոմյերիտական եմ և ապստամբութլուն եմ պատրաստում, - պատասխանում ե նա հպարտութլամբ: Այդ ժամանակ մենք մոտեցանք մի հարկանի տան, վորի պատշգամբում ծածանվում եր կարմիր դրոշակը:

— Այ, գնդի շտաբը, - ասաց ինձ պատանին: Սկսեցի սանդուխտներով արագ վեր բարձրանալ:

Պատուհանից նայում եմ. ընկ. ՊԵՏՐՈՍԿԵՆՎԻՍ—իր  
շտաբի հետ կանգնած ե ուղղակի քարտեզի առջև:  
— Թույլտվեք մտնել,—ասացի յես կիսաբաց դռնից:  
— Խնդրեմ,—սիրալիր պատասխանեց ընկ. ՊԵՏՐՈՍ  
ԿԵՆՎԵ և հրավիրեց տեղ բռնել իր կողքին:

Ընկ. ՊԵՏՐՈՍԿԵՆՎԻՍ գործում եր այդ ուղղությամբ,  
իբրև հեծյալ խմբակի պետ, իսկ այդ խմբակի մեջ եր  
մտնում և հայկական հեծբրիպապան:

Այն պայմաններում, վորի մեջ գտնվում եր հեծ-  
գունդը, բավական դժվար եր նրա համար գործել  
լեռնային տեղերում—թշնամու բազմաթիվ հետևակի  
դիմաց, ուստի ընկ. ՊԵՏՐՈՍԿԵՆՎԻՍ չափազանց ուրախ  
եր, վոր մեր վաշտը իր հետ եր և հետագայում իր ուղ-  
ղակի հրամաններում մեր վաշտին հատուկ խնդիր-  
ներ եր տալիս:

Կես գիշերին վերջացավ մեր խորհրդակցութունը.  
վորոշվեց հաջորդ որը նորից անցնել հարձակման՝  
Վարանցովկա և Պրիվոլնոե գյուղերի վրա: Խորհրդակ-  
ցութունից վերադառնալով, ընկ. ընկ. Բաբլումյանին  
և Ավագյանին հաղորդեցի մեր հետագա ծրագիրներ  
մասին, վոր նրանց շատ ուրախացրեց, մանավանդ  
Սոյոպայից, վորն ուրախանում եր նրա համար, վոր  
մի ամբողջ որ կարող ե կարմիր բանակայինների հետ  
քաղաքապամունք ունենալ:

Բաբլումյանն արդեն քնել եր, յերբ դուրս յեկա  
ստուգելու գիշերային պահակները:

Հենց նոր ելի սանդուխքներից իջել, նկատեցի մի  
խումբ մարդիկ, վորոնք գալիս էին դեպի ինձ: Մո  
տենալով տեսա, վոր զբանցից մի քանիսը մեր վաշտի  
կարմիր բանակայիններ են. դրանք շրջապատած բե-

բում են քսան հոգի ժողովրդական-գվարդիականներ։  
Հավասարվելով ինձ, պահակի պետ՝ Պետրոս Սահուլ-  
յանը մոտեցավ և ուրախ-ուրախ զեկուցեց, թե ինչ  
հաջողութիւնն է ունեցել և հպարտութեամբ ցույց տվեց  
գերիներին։

— Ես վճռեղից եք բերում սրանց,— հարցնում եմ  
Սահուլյանին։

— Դաշտային պահակատեղից, ընկեր հրամանա-  
տար,— պարզ ու վորոշ զեկուցում ե նա։

— Լսով, սարեք ավագի մոտ, թող ընդունի սրանց  
և մշուսների հետ նստեցնի ընդհանուր սենյակում։  
— Դուրս գալով հրասարակ, մթութեան մեջ տեսնում  
եմ ինչվոր սիլուետներ և լսում վոտնաձայներ։

Մեր վաշտի բանակայիններն են։

— Ո՞վ է եստեղ ավագը,— հարցնում եմ։

— Յես, չերկրորդ դասակի կարմիր-բանակային Սա-  
ղաթեյանքը,— համարձակ և առանց կապ ընկնելու  
պատասխանում է նա։

— Քանի՞ հոգի չեն։

— Քսանուհինգ,— առաջ գալով պատասխանում է,  
մի ուրիշ կարմիր-բանակային։

— Դե, լսով, տարեք վաշտի շտաբը և հանձնեցեք ա-  
վագին,— հրամայում եմ նրան և առաջ տնցնում։

Պահակներն ստուգելով, կրկին հանգիստ վերադառ-  
նում եմ շտաբ։ Չնայած ընկերներիս հոգնածութեանը,  
արթնացնում եմ նրանց և ուրախ-ուրախ պատմում  
մենչևիկական զորամասերի քայքայման մասին։

Մյուս որը, դեռ լուսը չբացված, կարմիր-բանակա-  
յիններն զբաղված ելին իրենց «արդ ու զարդով»։  
Վորն իր տրեխներն եր կարկատում, վորն իր շավա-

րը, վորն ել մենչեկններից խլած պահեստներից ստացած շորերն եր չափում:

### ՎԱՐԱՆՑՈՎԿԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Փետրվարի 14-ին կարմիր-բանակայիններն ամբողջ որը հանգստանալով՝ պատրաստ ելին նորից կովի լեւնել: Մեր գրաված պահեստներից մենք կարմիր բանակայինների մի մասին շոր ու կոշիկ տվեցինք, ինչ վոր ավելի բարձրացրեց կարմիր-բանակայինների տրամադրութունը:

Կեսորին ընկ. Պետրոսկովն իր մոտ կանչեց հրակազմին և հայտնեց, վոր հետախուզողության տվյալների համաձայն, թշնամին բռնել ե Ապպազլու սարը. լերկու հենարանավոր գնդացիք ունի և մոտ մի վաշտ հետևակ: Նրանց կողմից փախած մալականները հաղորդում են, վոր թշնամին մյուս ուղղությամբ բռնել ե Սարատով գյուղակը. — այնտեղ կա մեկուկես վաշտ հետևակ և 2 հենարանավոր գնդացիք. իսկ թե թիկունքում ինչքան և ինչ պորամասեր ունեն, այդ մասին ճիշտ տեղեկութուններ չկան, և վոր մոտ մի գումարտակ հետևակ կա Պրիվոլնոսի գյուղի ուղղությամբ:

Ընդհանրապես մենք այն լեզրակացությանն լեկանք, վոր առայժմ մեր հարձակման ճանապարհին՝ առաջին գծի վրա մեկուկես դումարտակ հետևակ կա, վորոնք հենարանավոր գնդացիքներն ունեն:

Թշնամու մասին այս տվյալներն ունենալով, վորոշվեց դուրս դալ մթնով, վորպեսզի աննկատելի կերպով մոտենանք թշնամուն, հարձակվենք Ապպազլու սարի վրա և նրան քշենք այնտեղից դեպի Վարան-

ցովկա, իսկ մինչ այդ Հայհեծրբրիգադան իր հերթին  
կկարողանա գրոհ տալ Թշնամու վրա Պրիվոնոն գյուղի  
ուղղությամբ:

Յերեկոյան աղջամուղջին շարժվեցինք Վարանցով-  
կայի ուղղությամբ, իսկ հեծրբրիգադան ջոկվեց մեզնից  
և գնաց Պրիվոնոն վրա: Թշնամուն Ապպապու սարից  
և Սարաաովկա գյուղից քշելու պարտականութունը  
գրված էր մեր վաշտի վրա, իսկ Պրիվոնոնին գրավելը՝  
հեծրբրիգայի վրա:

Մենք քայլ առ քայլ հանգիստ առաջ հյինք գնում:  
Հասնելով լեկեղեցուն՝ հեձուենդը կանգ առավ և  
զորասյունների շղթայով լսվեց հրաման.

—Վաշտերի հրամանատարները ջոկատի պիտի մոտ:  
Շտապ դուրս լեկա շարքից և մոտեցա ընկ. Պեռ-  
րուսկովին:

Զորախմբի պետը նորից մեզ բացատրեց խնդիրը  
և հրամայեց իմ վաշտով առաջ անցնել և հարձակվել  
Ապպապովի վրա:

Սոսկալի մուխ գիշեր էր:

Մենք ստիպված էինք ճանապարհից դուրս գալ  
և գնալ շարունակ դաշտով—խորը ձյունի մեջ:

Կարմիր-բանակայինները, հաճախ խրվելով խորը  
ձյունի մեջ, համարձակ առաջ էին շարժվում, հրա-  
ցանները պատրաստ բռնած:

Առաջ ուղարկած հետախույզը դեռ վոչինչ չեր  
հաղորդել մեզ, բայց մենք, առանց կանգ առնելու,  
նրանց լեռներից առաջ էինք գնում: Հասնելով Ապպապ-  
ու սարի ստորոտին, վաշտը ցրիվ շարք բ՝ դուռնեց:  
Այլ թեև արդեն սարի հարավ-արևելյան լանջերով  
դժվարությամբ վեր էր մագլցում: Շատ չանցած, ոգի

մեջ ճայթեց վորոտանման բարձրաձայն «ուռան»: Աջ  
թևի լերկրորդ դասակը մի խումբ մարդիկ նկատե-  
լով, գրոհի դիմեց և բոլորին վերցրեց գերի: Բանից  
դուրս լեկավ, վոր գերի բռնվածները դաշտային պահակ  
ուղարկած ժողովրդական-գվարդիականներ ելին:  
Կարճ ժամանակից հետո, սարի մյուս գագաթին  
բռնվեց մյուս դաշտային պահակը: Գերիների խոս-  
քերից մեզ համար պարզվեց, վոր դաշտային պահակ  
ուղարկելով, մեր հակառակորդը մթնով ինքը գնացել  
ե գիշերելու Սարատովկայում և Վարանցովկայում:

Այս տեղեկութիւններն ստանալով, մենք շտապ  
ուղևորվեցինք դեպի Սարատովկա, վորպեսզի հնա-  
րավորութիւնն չտանք թշնամուն կանխելու մեր ուռաջ-  
խաղացումը:

Առաջ ուղարկած ընկ. Մալումյանի դասակը մենակ  
հաշիվ եր տեսել Սարատովկայում նստած թշնամու  
հետ. քշել եր նրանց և առաջ եր շարժուամ:

Նկատելով լերկրորդ դասակի հարձակումը, թշնա-  
մին արագութեամբ հավաքվեց ու սկսեց յետ քաշվել  
դեպի Վարանցովկա, վոչ մի դիմադրութիւնն ցույց  
չտալով:

Իեռ Սարատովկան չեյինք անցել, վոր մեր լետևից  
հասավ մեր հեծյալ զորամասը և սլացավ առաջ, հե-  
տապնդելու թշնամուն:

Հակառակորդը ամենևին չեր մտածում դեմադրել  
մեզ և ուշ գիշերով մենք մտանք Վարանցովկա:

Թեև սառնամանիք եր ու մութ գիշեր, բայց Վարան-  
ցովկայի բնակչութիւնը, մենշևիկյան զորքի հեռանա-  
լուց հետո, դուրս եր թափվել փողոց և մեծ վոզե-  
վորութեամբ դիմավորեց մեզ:

Հեծգունդը թշնամուն հեռու չեր քշել, և մենք հնարավորութիւն ունեցինք գիշերը հանգիստ քնելու: Այդ գիշեր մեզնից վոչ մի գործողութիւն չեր պահանջվում և ամբողջ վաշտը սենյակներում տեղավորվելով, կուշտ ընթրիքից հետո քնեց խոր քնով:

Տանտերը ժպտալով պատմեց մեզ, վոր իր մոտ գիշերելու եյին Բորչալվի կամավորները. հենց վոր լսեցին հրացանի առաջին պայթիւնը և իմացան, թե մենք Սարատովկայումն ենք, նստեցին ձիաներն ու թռան:—Այ քեզ զորք,— փորը բռնելով հռուում եր Սոյոպան:

— Դե, ընկերներ, բավական է, յեկեք մեր հարգելի տանտիրոջը շնորհակալութիւն հայտնենք ու գրնանք քնելու,—ասաց ընկ. Բաբլումյանը, վերցրեց իր վերարկուն և պառկեց ոռւսական փեշի վրա:

### ԴՈՒՄ ԱՆԻՍԻ ԿՌԻՎԸ

Փետրվարի 15-ին, ժամը, 10-ին ընկ. Պետրուկովից հրաման ստացանք դուրս գալ և շարժվել Ղաշղա-թալի ուղղութիւնով:

Յեղանակը միանգամայն նպաստում եր մեզ:

Արևոտ լեղանակ եր, ձիունը հետզհետե անհետանում եր ճանապարհից և հնարավորութիւն հր տալիս մեզ անարգել կերպով առաջ շարժվելու: Մեր աչքի առջև տարածվում եր Լոռու բավական ընդարձակ, հարթ տափաստանը, վոր չերկու կողմից սարերով պարփակված, ծածկված է սպիտակափառ սավանով: Շուրջներս ամեն ինչ ձիունի տակ եր: Թշնամին յետ փախչելիս, ճանապարհին շաղ եր տվել փամփուշտներ,

հրացաններ, գնդացիներ և մասամբ մթերակիր սայլեր:

Այդ որը մենք մեծ տարածութիւն պետք ե կտրելինք—30—35 վերստ, ու այդ տարածութիւնը մենք ստիպված չեղանք անցնել 13 ժամում:

Բացի նրանից, վոր դա մեծ տարածութիւն եր, առաջ ելինք գնում կուվով, մի բան, վոր դժվարացնում եր մեր շարժումը: Դրան պետք ե ավելացնել նաև այն, վոր ճանապարհը սաստիկ ծանր եր—կամ իջնում ելինք, կամ բարձրանում լեռնագագաթները, բայց պետք ե խոստովանել, վոր շնորհիվ խճուղու—այնքան ել չհոգնեցինք:

Տեղ-տեղ, ճանապարհի այս ու այն կողմը սարերը ծածկված ելին ձյունաթաղ անտառներով. գլուղեր քիչ ելին պատահում. պատահում ելին և գլուղեր, ուր կենդանի շունչ չկար, չերևի վախենում ելին բայլչիվիկներից: (Սովորաբար դատարկ ելին լինում վրացական գլուղերը, վորոնց բնակիչները, մենչիկների պրովակացիաներից վախեցած, բայլչիկներից սարսափած, թողնում ելին իրենց տնտեսութիւնը և թըշնամու նահանջող գորքի հետ փախչում):

Ղաղա-թալից սկսած, մենք անցնում ելինք անտառածածկ, բարձր լեռների միջով:

Լեռների ու վոլորանների պատճառով մեր առաջից գնացող գլխավոր գորամասը, վոր ապահովում եր մեր շարժումը, շեր չերևում:

Իսկ առաջ ուղարկած հետախույզներն, իրենց հերթին շատ հեռու ելին գլխավոր ջոկատից:

Մեզանից դեպի աջ, Պրիվոլնոե գլուղի վրայով արշավում եր հալկական հեծքրիգադան դեպի Յեկատերինինֆելդ ու դենը՝ դեպի Մանգլիս:

Միառժամանակից հետո, գլխավոր զորամասը հայտնեց ջոկատի պետին, թե հետախուզիչները հաղորդում են, վոր թշնամին մի գումարտակ հետևակով և թնդանոթներով բռնել և Փոքր-Դումանիսից հարավ ընկած բարձունքները:

Այդ ժամանակ մենք մոտենում էինք ապակու գործարանին: Հետևակը, կամավորների հետ միասին մինչև յերեքհարյուր մարդ եր: Ընկ. Պեսոուկովը կարդալով հաղորդագրությունը, քարտեզի վրա իմանալով տեղերը, ինձ հրամայեց՝ մի դասակ ուղարկել Անգրևանի ուղղությամբ, վորպեսզի թշնամու թևը դուրս գան, իսկ յես, մնացած հետևակի հետ, թընդդիվիդիոնի աջակցությամբ պետք և հարձակման դիմելի և ոժանդակելի առաջապահ զորամասին՝ դուրս շարտել թշնամուն իր վրաված դիրքերից: Այս հրամանն ստանալով, առանձնացրի չերրորդ դասակը ընկ. Մասուրովի գլխավորությամբ, մի յերեսուն կամավոր ել ավելացրի նրանց և ուղարկեցի Անգրևանի ուղղությամբ:

Յերեք դասակը դուրս յեկավ խճուղուց և ծածկվեց անտառի թավուտում, վաշտը հանգիստ առաջ գնաց՝ ոգնության հասնելու առաջապահ զորամասին, վոր արդեն կռվի յեր բռնվել թշնամու հետ:

Կես ժամ անց, հրացանների և գնդացիների ճարճատյուն լսվեց, թե մեր ձախ թևում, ուր անցավ չերրորդ դասակը, և թե աջ թևում, — այն ուղղությամբ, ուր գործում եր հեծրիգադան: Ձյունով ծածկված խիտ անտառը թագցնում եր մեր մերձեցումը, և մենք բոլորովին մոտեցանք թշնամուն, վորը Փոքր Դումանիսից հարավ ընկած բարձունքները բռնած, խիտ

անտառով ծածկված կրակում եր մեր առաջապահները վրա:

Մեր վաշտը ցրիվ շարքով սկսեց վազել մի թագըստոցից մյուսը, հենց վոր դուրս լեկավ թշնամուհրացանի կրակի շրջանից. լավեց թնդանոթների բոմբյունը, և սոււմբները շվացնելով, մեր գլխի վրայով թռչում ելին հեռու, դեպի մեր գլխավոր ուժերը և խուլ անտառում թնդալով պատովում: Լսվում եր անընդհատ թնդանոթաձգություն և հրացաններն ու գնդացիրները անվերջ կրակում ելին:

Մենք սարսուռւմ ելինք, թե վորտեղ վոր ե մերոնք կպատասխանեն նրանց, բայց չգիտեմ ինչու, դանդաղում ելին. ամենայն հավանականությամբ մարտկոցները ամրացնելու տեղ չկար: Վերջապես, մեր լետելը — թիկունքում լավեց-կրակոցների ուժեղ թնդյուն: Մեր մարտկոցներն սկսեցին խփել թշնամու իհայտ բերված թնդանոթներին: Միառժամանակից հետո թշնամու մարտկոցը լուեց. լերևի մերոնց կրակն արդեն ջարդել եր նրան և դուրս հանել գործածությունից:

Մենք շարունակ ավելի ու ավելի ելինք մոտենում: Թշնամին կրակում եր ջղայնորեն. մեր մարտկոցներն արդեն ուժեղացնում ելին թշնամու կենդանի ուժերին: Մեր թնդանոթները ավերել ելին թշնամու դիրքերը:

Թշնամին չկարողացավ դիմանալ և սկսեց նահանջել. դրանից հետո լավեցին բարձրաձայն աղաղակներ՝ «Ուուււ», «ուուււ» «ուուււ», — ու մենք գրոհ տվինք:

Թշնամին մի քանի հենարանավոր գնդացիրներ, մեծ քանակությամբ փամփուշտներ ե շատ հրացաններ թողնելով, սկսեց լետ քաշվել:

Մեր հեծմասը հետևեց նրանց ու, նկատելով թշնամու անկարգ նահանջը, հարձակվեց նրան հետապընդելու:

Հենց վոր մեր հեծգունդը դուրս չեկավ և սկսեց սեղմել թշնամու զորասյուներին, իսկույն անտառի ծայրից դուրս թռավ թշնամու զրահապատ մեքենան և սկսեց կրակ բանալ մեր հեծմասի վրա:

Մերոնք իրենց չկորցրին և շարունակեցին թափով հարվածել: Զրահապատ մեքենան տեսնելով, վոր մեր հեծյալները հասել են իրեն, շուռ չեկավ և արագ փախավ, իրենց հետևակին թողնելով բախտի կամքին:

Մենք վոգևորությամբ դիտում եյինք, թե ինչպես մեր հեծմասը սեղմում ե թշնամու թիկունքի զորքերին՝ աջ ու ձախ սրբելով:

Այստեղից մենք սկսեցինք առաջ գնալ ազատ քայլով: Փոքր Դուժանիսին չհասած, ճանապարհին մեր ձեռքն ընկան պատրաստի ճաշով լի չերկու զին-խոհանոց: Ժողովրդական-զվարդիականները այնպես հանկարծակիի եյին չեկել, վոր վոչ միայն չեյին կարողացել իրենց խոհանոցները հետները տանել, այլ և հնարավորություն չեյին ունեցել ճաշը թափել, վոր մեր ձեռը չընկնի:

Մենք այդտեղ հանգիստ առանք, կարմիր-բանակայինները ճաշեցին և մենք շարունակեցինք մեր առաջխաղացումը:

Մեծ-Դուժանիս հասնելով, հեծջոկատի պետը՝ հեծգնդի և մարտկոցների հետ մնաց այդտեղ, իսկ ինձ մի հեծեսկադրոն տալով՝ հրամայեց առաջ շարժվել, գրավել ԿիոՅեսը և աշխատել ըռնել զրահապատ մեքենան — չեթե նա չերևա այդ կողմերում: Յերկու ժամից հե-

տո մենք գրավեցինք Կիոճեքը: Կիոնետում համարյա վոչ մի կենդանի արարած չգտանք, բացի մի քանի ծերունիներից: Գյուղացիների ունեցվածքը գյուղում շաղ տված եր ամեն կողմ. կային նաև փողոցներում ընկած կիսով չափ բարձած չերկանիվ սալեր. չերևի փախչողներն ուզեցել ելին տանել իրենց հետ, բայց չեյին կարողացել: Վորովհետև ուշ եր և գյուղումն ել մարդ չկար, դժվար եր տակները գցելու բան և փայտ ճարել: Սաստիկ հոգնած բանակայիները պառկում ելին դատարկ տների ուղղակի հատակին. բայց ցուրտն ստիպում եր նրանց վեր թոչել և տաքանալու համար վազեցվաղ անել:

Այդ դրության մեջ բանակայիները շարունակ հարցնում ելին.— Ընկեր հրամանատար, չե՞րբ պիտի առաջ գնանք, ձանձրացանք պարապությունից:

Վերջապես, առավոտյան դեմ մի տեղից փայտ ճարեցին ու խարուկներ վառեցին: Բոլոր բանակայիները հավաքվելով խարուկների շուրջը, նստոտեցին և սկսեցին պատմել իրենց տպավորությունները մենչեվիկյան գվարդիականների վախկոտության մասին:

Լուսացավ թե չե, բոլոր խարուկները հանգան և մենք սկսեցինք խճուղում շարք կանգնել, մեր արշավանքը շարունակելու համար:

Կես ժամից հետո մենք շարժվեցինք Յեկատերինին-Ֆելդի վրա:

Կարմիր-բանակայիները ցրտից պաշտպանվելու համար սկսեցին ամեն տեսակի խորամանկության դիմել: Գվարդիականներից խլած թաղիքե վերարկուները կտրտում ելին և փաթաթում վոտքներին, վրայից ել թոկով կամ հեռախոսի լարով կապկպում: Սա պահպանում եր ցրտից:

Մենք անցնում ելինք ավելի ցուրտ տեղերով. սառնամանիքը հասնում եր 12—15 աստիճանի, իսկ ձյունն ամեն ուր շարունակ գալիս եր ու գալիս և դժվարացնում մեր շարժումը: Դրանից ավելի մեծ դժվարութուն եր կարմիր բանակայինների սնունդի խնդիրը: Այդ պայմաններում բանակայիններին պետք և ուժեղացրած սնունդ տալինք, բայց վորովհետև մթերք ձեռք բերելու պայմանները դժվար ելին, մենք հացի բաժինը սահմանված չափից յերկու անգամ պակասացրինք, թեև մսի բաժինն ավելացրինք: Բայց բանակայինները սրանով չեյին բավարարվում, վորովհետև աղ չկար, ուստի միսը չեյին ուտում: Մնում ելին քաղցած սպասելով, վոր մենչևիկյան զորքերը «Կհոգան» մեր մասին, կամ մի տեղ ժողովուրդը կկերակրի մեզ: Այսպես բանակայինները սառած ու սոված աշխուժ առաջ ելին գնում. հուսադրելով իրենց, թե մի վորև ե տեղ կգրավենք գվարդիականների պաշարը ու կապրենք դրանով: Այսպիսով մենք հասանք «Ղզի գյուղ» բարձունքի հարավային կատարին. հենց վոր այդ գագաթը բարձրացանք, մեր աչքերի առջև, ձյունապատ լեռների միջև ընկած լալն հովտում, արևի լույսի տակ փայլփլեցին Յեկատերինինֆելդ ավանի տանիքները:

Գաղուժի կողքով, արժաթանման փայլելով, բարձր ուղիղ կաղամախիների ու բազմաթիվ այգիների միջով վազում եր Մոշավեր գետը: Այդտեղից մենք պարզ տեսնում ելինք այդ գեղեցիկ ավանի ընդհանուր տեսարանը, բազմաթիվ այգիներն ու նրանց մեջ ցրված յերկհարկ, սպիտակ, թիթեղածածկ տները:

Մտնելով ավանը, մենք հիացանք այդ փոքրիկ քաղաքի բարեշինությամբ: Բոլոր փողոցներն ուղիղ ելին

ու լաչն. բակերը փայտե պատնեշներ, տեղ-տեղ ել լերկաթե ցանկապատներ ունեյին: Փողոցներում ջրի ծորակներ կային. փողոցների անկյուններում լապտերներ չհամար բարձր սյուներ կային տնկած, փողոցների անունները անկյուններում փակցրած, տները համարակալած: Մեր դիմաց, մեծ հրապարակում, կանգնած եր գերմանական մեծ աղոթատունը (կիրկա): Մենք գնում եյինք ուղիղ դեպի այդ հրապարակը, ուր ամբողջ բնակչութունը դուրս եր թափվել մեզ դիմավորելու: Ջոկատի պետի համհարզը, մի բարձրահասակ գորշ ձի նստած, իր թիկնապահներով շրջում եր հրապարակում և աղաղակում.

— Ջորամասերը կանգնեցրեք հրապարակում:

Մենք հասանք հրապարակը և սկեցինք շարք կանգնել հենց այդ կիրկայի դիմաց: Հրապարակում շատ ժողովուրդ եր խռնվել — անասելի հրհրոց եր: Ջանապան ազգերի գլուղացիական զանգվածներ լեկել եյին մեզ վողջունելու.

Ջոկատի գինկոմի լերկհարկանի տան պատշգամբում լերկալը բնակչութունը ընդունեց խանդավառ աղաղակներով.

— Կեցցե կարմիր բանակը:

— Կեցցե Խորհրդային Վրաստանը:

— Կորչեն մենշևիկները, կորչեն նրանց առաջնորդ ժորդանիան ու Գեգեչկորին:

Իսկ հրապարակի մլուս ծայրում անընդհատ կանչում եյին «ուռան», «ոռան», «ոռան»:

Մեր կողքին կանգնած եր մի նիհար, նոսր մորուսով, սև ու փայլուն աչքերով թուրք, ինչպես լերկում եր — բատրակ. նա իր մաշված փափախը թափահարելով, աղաղակում եր.

— Կեսսե Լենին, Տրոս, Նարիման Նարիմանով:

Ուրախութիւնսից նրա աչքերը պսպղում ելին. մենք նայում ելինք նրա արագաշարժ, սև աչքերին, նրա նիհար, ներս ընկած թշերին ու նրա հետ ուրախանում ելինք նրա ուրախութեամբ:

Թուղցիկ միտինգը վերջացաւ, ու մենք ցրվեցինք մեզ հատկացրած բնակարանները: Չգիտելի, թե վորտեղ են իջել իմ ընկերները՝ ընկ. Բարլումյանն ու Ավագյանը, իսկ Յեկատերինինֆելդը շատ մեծ է, վոր կարելի լիներ իսկույն գտնել նրանց, ապա ստիպված չեղա չերկար փնտռել նրանց, սակայն անհետևանք: Իմ այդ փնտռումների միջոցին մի տան հանկարծ հան-



դիպեցի Տ հոգուց բաղկացած մենշեիկական սպաների մի խմբի. նրանք, իմ գլխարկը տեսնելով, կուչ չեկան

սենյակի անկյուններում և շունչները սլահեցին: Մի հալացք ձգելով նրանց վրա, արտաքին տեսքից վորոշեցի, վոր դրանք սպաներ են:

— Ո՞վքեր եք դուք, — հարցրի նրանցից մեկը կմկմաց.

— Մենք, մ... մ... զինվորներ ենք: — Ավելի մոտեցա նրանց ու տեսա, վոր սպայական ուսադիրները հենց նոր են պոկել:

— Ե՛, սիրելիքս, դուք ինձ չեք կարող խաբել. դուք սպաներ եք, ինչո՞ւ չեք ստում:

Հռութչուն:

— Դե, պատրաստվեցեք, — ասացի նրանց:

Հազիվ սկսեցին տեղերից շարժվել, ավելացրի.

— Գնալուց առաջ զենքներդ տվեք:

Նրանք զրպաններից հանեցին — վճրը մատուցեց, վճրը նագան, վճրը բրաունինգ և դարսեցին սեղանին:

Այդ ժամանակ վրա հասան իմ կանչած չերեք բանակայինները, վորոնք և գերի սպաներին տարան ջուր կատի շտաբը:

### Մ Ա Ն Գ Լ Ի Ս Ի Գ Բ Ա Վ Ո Ւ Մ Ը

Հուսաբացին մենք վեր կացանք ու գնացինք մեր մերկ ու վոտաբորիկ բանակայինների համար կողիկներ ստանալու: Պետք է խոստովանել, վոր համենայն դեպս մենչևիկները բավականաչափ «հոգ ելին տանում» մեզ համար, թողնելով մեզ մեծ քանակությամբ մթերք և մասամբ շորեղեն:

Ժամը մոտ 8-ին, ստացած շորերը բաժանելով բանակայիններին, ճանապարհ ընկանք Վաղեյի ուղղությամբ, վորպեսզի միանանք հայկական հեծրրիգադային՝ Մանգլիսի վրա հարձակվելու համար:

Այդ որը մենք ստիպված ելինք շարունակ անցնել լեռնային շավիղներով: Յեւ վորովհետև մենք գումակ (արող) ելինք ձեռք բերել, պետք եր մտածել, թե ինչպես անենք, վոր մեր սալերը չկորցնենք սարերում: Ուստի նախորդ մարդիկ ուղարկեցինք՝ ճանապարհը մի քիչ կարգի բերելու: Չնայած դրան, այնուամենայնիվ մեծ դժվարութուններով ելինք առաջ շարժվում. վոչ մի սալ առանց մարդկային ոգնության չեր կարողանում բարձրանալ. նույնիսկ ձիով հեշտ չեր բարձրանալ այդ ձյունածածկ շավիղներով: Մանավանդ դժվար եր Խրամ գետն անցնելն ու Դաղեթ. Ոսկեն բարձրանալը: Ընդհանրապես այդ ճանապարհն անցնելը իսկի դուրեկան չեր: Մանավանդ Վակեյից այն կողմը, յերբ անցանք Սւգեթի ձորը. կամ սալերն ելին գլորվում ցած, կամ ձիերն ելին գայթում և ընկնում. պատահում եր, վոր հագիվ ելինք պահում նրանց: Մարդիկ մի կերպ գնում ելին կամ խմբերով կամ ջոկ ջոկ. թե առաջ վազողներ շատ կային, թե չետ մնացողներ:

Վակեյում մենք հանդիպեցինք հայհեծրիգադային, վորն սպասում եր մեր գալուն: Մինչև չերեկո կարմիրբանակայիններին հանգիստ տալով, մութը վրա հասավ թե չե, դուրս չեկանք Մանգլիսի վրա:

Յերբ Վակեյից դուրս գալով բարձրացանք մեծ սարը, մեր առջև բացվեց Ալգեթ գետի մեծ ձորը, վոր ծածկված եր ամեն կողմից անտառով և խոր, թարմ ձյունով:

Բոլորից առջև գնում եր հայհեծրիգադայի մի եսկադրոնը, նրանից հետո 2 կիլոմետրի վրա գնում եր մեր վաշտը և կամավորները—մոտ 200 մարդ (այդ ժամանակ կամավորներից հարյուր մարդ ցրվել ելին ի՞

րհնց տները և միայն 200 մարդ եր ֆնացել): Հետևա-  
կի չտակից գալիս եր հեծրրիգադան: Հենց վոր իջանք  
ձորը և Ալգեթ գետի ձախ կողմն անցանք, վաշտից  
հետախուզներ ուղարկեցինք չերկու ուղղութիամբ՝  
Փոքր Թիոնեթի և Մեծ Թիոնեթի կողմը: Դեռ չերեք  
կիլոմետր ել չեյինք անցել, վոր Փոքր Թիոնեթի կող-  
մից հրաձգութիան ձայն լսվեց: Ապա հրաձգութիունը  
նվազեց և վերջը բոլորովին կտրվեց: Մենք հարավից  
արդեն մոտենում եյինք Մանգլիսին, չերբ մեր առջև,  
այդ ուղղութիամբ, առաջապահ մասի հետ հրաձգու-  
թիուն սկսվեց: Մեզ համար պարզ եր, վոր եսկադրոնը  
կովի չե բռնվել, ուստի քալլներս արագացրինք, շտա-  
պելով ոգնութիան: Եսկադրոնը մթութիան մեջ արադ  
սլանում եր առաջ: Վաշտն առաջ անցավ, բայց հենց  
Մանգլիսի ծայրին ուժեղ հրացանի ու գնդացիային  
կրակի տակ կանգ առավ: Վաշտը տեղին հարմարվե-  
լով, դիրքեր բռնեց և վորոշեց չկրակել, վորովհետև  
մթութիան մեջ վոչ վոք չեր չերևում: միայն հակառու-  
կորդի հրացանի փողից դուրս չեկող բոցն եր, վոր մի  
վայրկյան լույս եր տալիս ու մարում խավարի մեջ:  
Այդ ժամանակ մեզ մոտեցավ 20-րդ դիվիզիայի հեծ-  
գունդը:

Մենք սկսեցինք դեպի ձախ շարժվել, Ալգեթ գետի  
ձախ ափով: Հեծգունդն շտապում եր և նույնպես մար-  
տական դիրք ընդունում: Թնդանոթներն սկսեցին  
սարքավորվել, ամրանալ, շնայած լավ չգիտելին, թե  
ինչպիսի տեղ ե: Իսկ հեծրրիգադան գնաց Մեծ Թիո-  
նեթի ուղղութիամբ:

Այսպիսով, Մանգլիսը շրջապատված եր կիսաշրջա-  
նով: Հայկական հեծրրիգադան շրջապատել եր Թիոնե-

թի կողմից. — առաջ եր շարժվում, վորպեսզի հետագայում գրոհ տա թշնամու վրա արեւելքից. այդ դեպքում մեր վաշաը ուղղակի թշնամու ճակատին եր տալիս, իսկ 20-րդ դիվիզիայի հեծվունդը մնում եր յերկրորդ տեղը, պատրաստ ոգնելու հետեակին:

Մեր դրուժւունը սոսկալի յեր: Անցած որվա ճանապարհն ու անքուն անցկացրած դիշերը այնպես ելին հոգնեցրել մեզ, վոր ձյունի վրա պառկած, յերբեմն քնում ելինք, այնինչ ցուրտն անցնում եր մինչև մեր վոսկրները:

Ջոկատի պետ ընկ. Պետրոսկովը, ինկատի ունենալով ստեղծված դրուժւունը, դաշտային գրքուկի վրա հրաման եր ուղարկել ինձ. — անհապաղ գրոհի դիմել և գրավել մալականների թաղամասը, վորպեսզի առջևից ռազմական պահպանութւն ունենալով, մնացած բանակայիններին կարելի լինի տեղավորել այդ թաղամասում, և վճռական հարձակման համար հանգստանալ:

Մենք գրոհի պատրաստվեցինք: Նշանի համաձայն, հետեակը գրոհ տվեց, բայց մեր փորձն անհաջող վերջացավ: Հրացան-գնդացիային ուժեղ կրակը ստիպեց մեզ կանգ առնել և թշնամուց 150 - 200 քայլի վրա պառկել: Միառժամանակից հետո մենք նորից գրոհ տվինք և թաղամասը գրավելով, դուրս յեկանք պուրակի հարավային ծայրը:

Այսպիսով թշնամին դուրս քշվեց իր այն հիմնական դիրքերից, վոր գտնվում եր պուրակի հյուսիսային կողմում: Մեզ համար այդ դրուժւան մեջ մնալը դժվար եր: Մենք ցանկանում ելինք նոր գրոհի դիմել, յերբ հենց այդ ժամանակ ստացվեց հետեակը հրամանը:

«Հայհեծրիգադայի դիտողութւնները համաձայն,

սլարզվում է, վոր թշնամին ձգտում է խճուղին ձեռքից չթողնել, յերևի նրա համար, վոր իր նահանջի ժամանակ ապահով լինի»:

«Յես վորոշեցի. ժամը 6-ին գրոհ տալ թշնամուն և շարտել Մանգլիսից հյուսիս — այնպես, վոր նա զրկվի խճուղուց ոգտվելու հնարավորութունից»:

«Հրամայում եմ ձեզ. անհապաղ մի դասակ ուղարկել Մանգլիսից դեպի արևելք և խնդիր տալ նրան՝ դուրս գալ խճուղին և թույլ չտալ հակառակորդին ոգտվել խճուղուց»:

«Իսկ դուք ինքներդ պատրաստ պիտի լինեք առավոտյան ժամը 6-ին պուրակում ամրացած թշնամուն գրոհ տալու: Չեզ կոժանդակի թնդանոթածիզ դիվիզիոնը»:

Այս հրամանը աշխուժացրեց մեզ. արդեն ձանձրացել ելինք ձյունի վրա սառչելուց:

Կարդալով հրամանը, Մտյոպան ցանկութուն հայտնեց դասակի հետ գնալ դեպի խճուղին՝ թշնամու նահանջի ճանապարհը կտրելու: Կարճ ժամանակից հետո յերկրորդ դասակը դասակապետ Մատուրովի և Ավադյանի գլխավորութամբ Մանգլիսից դեպի արևելք լեզող ձորով ուղևորվեց՝ խճուղին դուրս գալու նպատակով:

Հաշվով դասակն իր նպատակին պիտի հասներ յերեսուն ըոպեյից հետո: Հետևապես գրոհի ըոպեյին նա պետք է կարողանար բռնել խճուղին: Սակայն բանից յերևաց, վոր մենք ուշացել ենք: Թշնամին նախատեսել էր այդ և առաջուց բռնել էր խճուղին: Ու յերբ մեր դասակը մոտենում է, թշնամին սկսում է ուժեղ կրակ բանալ հրացաններից:

Ձնայելով դրան, Փասուրովք վորոշում է գրոհ տալ  
բայց չետ եշարտվում և մեր լավ ընկերներից չերեք  
հոգի դոհ են գնում այդտեղ:

Այդ տեսնելով, ընկ. Փասուրովք դասակը յետ է բե-  
րում:

Սառնամանիքում բավական սառչելով, մենք սպա-  
սում ելինք, յերբ ժամը 6-ը կխփի, վորպեսզի գործի  
անցնենք:

Այդ ծանր մտքերի մեջ մենք հանկարծ հեռվից, աջ  
թևում, հեծրիգադայի շրջանում «ուռա» ի թույլ ձայ-  
ներ լսեցինք:

Մենք բնազդաբար վեր ցատկեցինք և սկսեցինք  
լարված ականջ դնել. ադադակը հետդհետե շարունակ  
ավելի ու ավելի ուժեղ է հնչում. մեր վաշտը արձա-  
գանքում է դրան, կարմիր-բանակայինի կուրծքը ուռ-  
չում բարձրանում է, դուրս է թռչում վայրենի, բայց  
թշնամու համար ահարկու ճիչ, և բոլորը խառնվում,  
ձուլվում, դառնում է մի վոռնոց: Ո՛ր, ի՛նչ վոզևորված  
դեմքեր... ի՛նչ չերջանկութուն էր փայլում բանակա-  
յինների աչքերում.—ամբողջ մարդկային դանվածը  
վեր է կենում և մի մարդու նման, ինչպես հեղեղ գնում  
է թշնամու վրա:

Վերջինս իզուր տեղը անընդհատ շտապողական գըն-  
դացիրային կրակ է բանում, վորին իր ուումբներով,  
խուլ կերպով պատասխանում է մեր թնդանոթային  
գիվիզիոնը:

Ու մեր անվախ բանակայինները, առանց կանգ առ-  
նելու, ուշադրութուն չդարձնելով վոչ մի խոչնդոտի,  
մեր թնդանոթների աջակցությամբ շարժվում են թըշ-  
նամու վրա:

Հակառակորդն այսպիսի զրոհի չերբեք չեր սպասում,  
նա շփոթվեց և սկսեց սարսափահար լետ քաշվել:

Մեր գրոհի ըսպելին հեծգունդը պատրաստ եր հե-  
տապնդելու թշնամուն: Ու հենց այդ ժամանակ ձիերը  
քշելով հարձակվեց՝ հետապնդելու սարսափահար փախ-  
չող թշնամուն:

Հեծգունդը գնաց քշելու մենչկիկներին և գվարդիա-  
կաններին, իսկ մենք գնացինք հին Մանգլիս՝ հան-  
գստանալու:

Հետևյալ որը Նոր-Մանգլիսի հրապարակում, պու-  
րակի մեջ, տեղի ունեցավ մեր այն լավ ընկերների  
թաղումը, վորոնք զոհվեցին ճնշված պրոլետարներին  
մենչկիկներից ազատելու համար: Մանգլիսում մնա-  
ցինք 2 որ: Այդտեղ ել, Մանգլիսի պահեստներից հազ-  
ցնելով մեր կարմիր-բանակայիններին նոր շորեր ու  
կոշիկներ, մենք գնացինք Յելիսավետսոլի (Պրիլուտ)  
վրա: Ծաշին այնտեղ հասնելով, լերեկոյան մենք գնա-  
ցինք ճակատ՝ փոխարինելու հեծյալ մասերին:

Գիշերը, բարձունքում կանգնած, մենք տեսնում ե-  
յինք, թե ինչպես հեւվում Գուռ գետի հովտում վառ-  
վում են տասնյակ հազարավոր ելեկորական ճրագներ,  
վորը գրավում, քաշում եր մեզ: Դա թիֆլիսն եր,  
մենչկիկական Վրաստանի սիրտը. և չերբ մենք այդ  
քաղաքը վերցնելինք, դրանով կանխապես կվորոշվեր  
մենչկիկների բախտը: Այդպես ամբողջ գիշերը և հե-  
տևյալ որը, առանց թշնամու հետ ընդհարվելու, կանգ-  
նելով այդտեղ, լերեկոյան նորից գնացինք Պրիլուտ՝  
հանգստանալու:

Յերբ Յելիսավեոսիս հասանք, մենք սկսեցինք տեղավորվել բնակարաններում: Հաղիվ եր վաշտը տեղավորվել մալականների տաք տներում ու պառկել քնելու, վոր ջոկատի պետից հրաման ստացա—լետ գալ, միանալ հեծյալ դորամասերին, վորպեսզի լուսաբացին գրոհ տանք Քյուռ-Ողլի սարի վրա գտնվող Թշնամուն:

Այդ փոքր ճանապարհը, ինչպես և գիշերվա բոլոր գնալ-գալը, սաստիկ հոգնեցուցիչ և դժվար ելին: Ընդհանրապես, մեր պայմաններում, քաղաքացիական կովի փորձից մենք այն լեզրակացուլթյանն լեկանք, վոր գիշերային շարժման ամենամեծ արագուլթյունը կարող և լինել ժամում 2 վերստ—քանի վոր ձյան պատճառով և այլ պատահական խոչնդոտների հետևանքով ավելի գնալ հնարավոր չեր: Քառասուն բոպելից հետո վաշտն առաջ շարժվեց:

Այստեղ արդեն մեզ հետ կամավորներ չկային: Նրանք վաղուց թողել ելին մեր շարքերը: Զանազան պատճառներով լետ ելին մեում ու հետո բոլորովին վերադարձան իրենց տները:

Առավոտյան աղջամուղջին մենք հասանք հեծբրիգադայի բանակատեղին ու տեղ բռնեցինք նրանց կողքին: Կրակ վառել չեր թուլյատրվում, ու կարմիր բանակայինները սաստիկ սառնամանիքից թռչկոտում ելին իրենց տեղերում, շուտով կովի գնալու վառ ցանկուլթյամբ:

Ջոկատի պետը մեզ հետ եր և լուսաբացին սկսեց աչքի անցնել Թշնամու դիրքերը: Հետախուզելով տեղը, նա հրամայեց ինձ—իմ վաշտով շարժվել դեպի

Նվիրեսք, թշնամու հետ միևնույն հարթութիան վրա տեղ բռնել և հարվածող զորամասին հնարավորութուն տալ դուրս քշել թշնամուն իր դիրքերից:

Հակառակորդը բռնել եր 4459 բարձունքը և լես իմ վաշտով պետք ե դուրս գալի նրա թևում: Մեր վաշտը աննկատելի կերպով դուրս լեկավ Նվիրեսք, և այնտեղից անտառի միջով, մեծ չարչարանքով, թշնամուց աննկատելի, մոտեցավ նրան մի կիլոմետր տարածութիան վրա: Ըստ լերեույթին, թշնամին մեզ այդ կողմից չեր սպասում, նկատի ունենալով ճանապարհի դժվարութունն ու խոր ձյունը: Նա իր ուշադրութունը կենտրոնացրել եր խճուղու վրա: Ընդհանուր հարձակումն սկսվեց: 4459 բարձունքից լսվեց հրացանների և գնդացիների ճրտճրտոցը. իսկ թշնամու թընդանոթներն սկսեցին ուժեղանալ հարձակվող հեծրբլուփադալի և Քյոռ-Ողլի սարումն լեղող մեր պահեստի զորասյունները:

Մեր վաշտը հետզհետե, կենտ-կենտ սկսեց հավաքվել ձորում, վոր դուրս գա թշնամու թիկունքը: Մենք ձյունապատ, ուղղաձիգ լանջով սկսեցինք մազլցել վերև: Թշնամու ուժեղ կրակի տակ սարալանջի ուղղաձիգ ձյունների վրայով մազլցելը շատ դժվար եր. այնուամենայնիվ մենք շարունակում ելինք առաջ շարժվել, և միայն յերբեմն կանգ ելինք առնում՝ թշնամուն հատհատ կրակոցով պատասխանելու:

Հակառակորդը չկարողացավ դիմանալ մեր հարձակման թափին՝ թե առջևից և թե թևերից, ու սկսեց լետ քաշվել դեպի պաշտպանողական շերտի գլխավոր դիմադրութիան գիծը: Թշնամին հետզհետե կանգ առնելով խոր ձորակներում ու ծապաններում, անտգուտ կերպով ճգնում եր կանգնեցնել մեր գրոհը:

Վերջապես, ձախ թևից հալհեծ՝ քրիզադայի հեծգունդն  
ալնպես սղմեց, վոր թշնամին ալլևս չկարողացավ դի-  
մանալ և սկսեց անկարգ կերպով իջնել դեպի Սպիտակ-  
Դուխանը:

Մեր վաշտին հրամայված եր հետապնդել թշնամուն  
և թույլ չտալ, վոր նա կարողանա վորևե տեղ ամրա-  
նալ: Մշուշի քողի տակ մենք սկսեցինք թշնամու հե-  
տևից իջնել Սպիտակ-Դուխան:

Հենց վոր մոտեցանք Սպիտակ-Դուխանին, մշուշը  
ցրվեց, ու մենք կանգնած ելինք թշնամու առջև: Քյոռ-  
Ողլի սարի վրա գտնվելով, նա շատ պարզ նկատում  
եր մեզ, հենց վոր մենք մի քիչ առաջ անցանք հան-  
կարծ՝

— Տրա, տա. տա. տա, — ճոճոացին գնդացիները և վոռ  
նացին նրանց թնդանոթները:

Մերոնք նրանցից չետ չեխին մնում: Մեր թնդանոթ-  
ների պաշտպանութան տակ, մենք առաջ ելինք շարժ-  
վում:

Հանկարծ մեզ վրա սկսեցին կրակել մեր առջևը դա-  
րան մտած ժողովրդական-գվարդիականները: Մեր հեր-  
թին մենք ել կրակ բաց արինք նրանց վրա: Մեր թըն-  
դանոթաձիգներն ու գնդացիրաձիգները նկատեցին  
նրանց, կրակն ուղղեցին նրանց կողմը և սկսեցին  
քարուքանդ անել նրանց դիրքերը:

Մենք շարունակում ելինք հարձակվել. մեր աջ թևը  
ճարպիկ արագութամբ վազեց ու դիրքեր բռնեց, բայց  
հակառակորդի գնդացիների անվրեպ կրակը հնձում եր  
մեր ձախ թևը: Նրանք վոչ մի դեպքում չեխին կարող  
բաց դաշտում կանգ առնել:

Կարմիր-բանակայիները պառկում ելին, մի քիչ

հարմարվում տեղին, կրկին վեր կենում ու նորից վազում. բայց թշնամին, չնայելով վոր մեր թնդանոթներն ավերում ելին նրանց խրամատները, սկսեց կրակել մեր վաշտի վրա շատ հաջող կերպով. ու մեծ տարածության վրա չերևում եր, թե ինչպես են մարդիկ շարքից դուրս գալիս, պտուկտ պտուկտ անում և ընկնում: Վոմանք ել ընկնելով, շարժվում ելին և վորևե թագստոցի տակ սողում: Ըլրիշները թափով գետին ելին գլորվում ու մնում անշարժ:

Կրակը թափվում եր մեղ վրա ավելի հաճախ, բայց ձախ թևի մնացորդները շարունակում ելին հարձակվել.— նրանց նպատակն եր գրավել առջևում մեր գծի վրա ընկած կիրճը՝ այնտեղ թագնվելու համար:

Կարմիր բանակայիների մնացորդները դաշտի միջով գնում ելին ցրված ու տեղ-տեղ ել խմբվում-միանում. ու հենց այդպիսի մի խմբված մասսայի վրա թշնամու գնդացիքը կենտրոնացրել եր կրակը. մերոնք համարյա բոլորը միանգամից ընկան:

Միայն մի վշտալի ճիչ դուրս թռավ մեր կրծքերից.— ապա անեծք, կատաղութուն ու վայրագ մոնչյուն:

— Ախար չե՞ ե, նրանք թագնվել են միայն, — աղաղակեց կարմիր բանակային Աշոտը:

— Այո՛, այո՛, — ասաց զինկոմ Բաբլումյանը, հուզված նայելով հեռադիտակով, — բոլորն սպանված չեն:

— Բայց ինչպե՞ս ե, վոր Ստյոպան չի չերևում, — նույնպիսի հուզմունքով, դիտակն աչքերից չհեռացնելով, հարցնում եր նա: Չնայած մշուշին, հեռադիտակով կարելի յեր տեսնել նրանց բոլորին, վոր դատում ցրված, կպել ելին գետնին: Բայց հանկարծ ծխի ամպը փաթաթեց նրանց. մեր թնդանոթները նորից

սկսեցին կրակել և դժբախտաբար հենց մեր շղթայի վրա, ուր պառկած էին մեր ձախ թևի կարմիր-բանակայինները:

— Սատանան տանի, ախար նրանք մերոնց վրա չեն կրակում, — հուզված աղաղակույթով եր Բարլումյանը, վազելով շղթայի ուղղութեամբ: Ամբողջ մարտկոցի առաջի համազարկը թնդում եր այդ խումբ մարդկանց վրա, ապա ուսմբնիքը պայթում էին նրանց վերևը: Թնդանոթները կուրորեն շարունակ նույն տեղն էին խփում:

— Պետք է զգուշացնել նրանց... պետք է կանգնեցնել, — աղաղակում եր բոլորովին գունատված Բարլումյանը: Բայց ինչպե՞ս նախազգուշացնենք և ու՛մ. — Թընդանոթները մեզնից 3 վերստի վրա չեն: Մինչ մենք մտածում էինք, թե ինչ կերպ նախազգուշացնենք մեր թնդանոթաձիգներին, տեսնենք մերոնց շղթան վեր կացավ ու սկսեց չետ փախչել դեպի մեզ, իսկ թնդանոթաձիգները հետևակի հետ վատ կապ ունենալով, ու չենթադրելով, վոր հակառակորդն է հարձակվում, նշանացույցը փոքրացրին ու սկսեցին կրակ բանալ նրանց վրա: Շղթան նորից պառկեց: Մեր թնդանոթների այսպիսի սխալ ուժբաձգութունը կատաղեցրեց ինձ, ու ստիպված էի սուրհանդակ ուղարկել, հաղորդելու, վոր նրանք մերոնց են կրակում: Սուրհանդակը դեռ չերկու հարյուր քայլ էլ չեր անցել, չերթ թնդանոթներն իրենց կրակը շուռ տվին թշնամու խրամատների և թնդանոթների վրա:

Մենք հուզմունքով էինք նալում այն կողմը, ուր պառկած եր շղթան:

— Շարժվում են, շարժվում, — ուրախ-ուրախ ալա-  
ղակում եյին կարմիր բանակալինները:

Վերջապես, մի կես ժամ հետո, նրանք մեկ մեկ մո-  
տեցան մեզ:

— Բա ո՞ր ե զինկոմ Ավագյանը, — հարցնում ենք  
մոտեցող Մալումյանին:

— Նա ամենաձախ թևումն է, հիմա կգա, — սասց նա:

— Վա՛յ, Ստյոպա ջան, — ուրախ բացականչեց Բար-  
լումյանը, ու մոռանալով, վոր կովի դաշտումն է գտնը-  
վում, ամբողջ հասակով կանգնեց, դուրս լեկավ թա-  
գասոցից և վազեց Ավագյանին ընդառաջ:

Յերեկոյան դեմ մեր աջ թևի մոտ յեկավ 2-րդ հեծ-  
գունդը, վոր ցերեկվա կռիվներին մեզնից քիչ զոհ չեր  
սովել:

Սպիտակ-Դուխանի մոտ յեղած անհաջող գրոհից հե-  
տո, յերեկոյան դեմ, կռիվը յերկու կողմից ել ընդհատ-  
վեց և համարյա բոլորովին դադարեց: Միայն յերբեմն  
հատ ու կենտ հրացանի պայթյունն եր լսվում թե մեր,  
թե թշնամու կողմից:

Զի կարելի ասել, վոր մեր վերջին անհաջողութուն-  
նը մերոնց վրա առանձնապես ճնշող տպավորությունն  
եր թողել. նրանք ավելի շուտ գրգռված եյին, քան  
ճնշված:

Սկսեցի շրջել շրթան և հարց ու փորձ անել ուղ-  
մամթերքի մասին: Դեռ չեյի կարողացել յերկրորդ դա-  
սակին անցնել, յերբ սարի վրա, թշնամու խրամատ-  
ներից մի յերկու մարդ դուրս յեկան և վրացերեն ա-  
ղաղակեցին ինչ-վոր:

— Ո՞վ ե հասկանում վրացերեն, — հարցնում եմ լես գետնին պառկած կարմիր-բանակայիններին:

— Նրանք ուզում են բանակցութուններ վարել, — ասաց Բարլումյանը:

— Լավ, գնանք, բանակցենք, — ասացի նրան:



Դեռ չերեսուն քալլ չեյինք անցել, չերբ մեր յետե-վում, թմրի վրա ճոճուաց մեր գնդացիքը: Դեպի մեզ լեկող Ֆշնամու զինվորները, վոր գալիս եյին բանակ-ցելու, սպիտակ դրոշակ պարզեցին: Բայց մեր գնդա-ցիքը հեռու տարածության վրա չեր և վոչ մի սպիտակ դրոշակ չեր նկատում ու շարունակում եր կրակել: Ջինվորները պառկեցին, նրանցից մեկը չոքելով շա-րունակ շարժում եր սպիտակ դրոշակը:

— Նրանք սպիտակ դրոշակ են ցույց տալիս, յարգապես անձնատուր են լինում, բայց այս գնդացիքը թույլ չի տալիս, վոր նրանք մոտենան, — աղաղակեց Բարլումյանը և կանգ առնելով, նշան եր անում մեր գնդացիրաձգին, վոր կրակն ընդհատի, բայց գնդացիրաձիգը վոչինչ չե՛ր նկատում և շարունակում եր իր գործը:

Հանկարծ, հենց մեր վոտքերի տակ, թշնամու խրամատներից սկսեց նրանց գնդացիքը կրակ բանալ մեր դեմ:

Մենք պառկեցինք և սկսեցինք լետ գնալ, իսկ թըշնամու կրակն անընդհատ ուղեկցում եր մեզ: Մենք սողալով լետ յեկանք մերոնց մոտ:

Այսպես ուրեմն, մեզ վիճակված եր կրկին նստել այստեղ՝ ցրտին, և սպասել առավոտին, վորպեսզի նորից հարձակվենք:

Ցուրտն այնպես եր նեղում, վոր կարմիր-բանակայինները Մանգլիսում ստացած տաք կիսամուշտակները հանում ելին հագներից և փաթաթում վոտքներին, վորպեսզի ցրտահար չլինեն: Ստիպված լեղանք այսպիսի տանջանքներով անցկացնել այդ դիշերը:

Լուսաբացին մեզ փոխարինելու լեկավ 20 ըդ դիվիզիայի հեծգունդը — պահեստից, և մեր վաշտն սկսեց լետ քաշվել դեպի Սպիտակ-Պուխան:

Արդեն ըսվական լույս եր, և թշնամին նկատելով մեր լետ քաշվելը, սկսեց ոմբակոծել լայնաբերան թըշնդանոթներից. մենք, տեղին հարմարվելով, արագ վազեցինք, 4459 բարձունքն անցանք և հասանք պահես-

տի զորամասերին, մեր սպանված չոթ լավ ընկերներին թողնելով Սպիտակ-Դուխանի մոտ:

Յերբ տեղ հասանք, ջոկատի պետը մեր վաշտի առջև նոր խնդիր դրեց. — հրամայեց մի եսկադրոնի հետ միասին դուրս գալ Ախալ-Դեբա և զրավել Մղնեքը: Թեև ինձ շատ լավ հայտնի չէր վաշտի դրուժյունը, ու ինքը՝ ընկ. Պետրոշկովն ել իրազեկ էր այդ բանին, բայց հենց վոր շուռ յեկա՝ կատարելու նրա հրամանը, նա նորից չեա կանչեց և հայտնեց, վոր հեծեակադրոնն առանձին գնա: Իսկ ինձ կարգադրեց վաշտը տանել Ջիրբիսի գյուղը: Շների հաջոցը իմաց տվեց գյուղի բնակիչներին, վոր անձանոթ մարդիկ են մոտենում: Այստեղ-այնտեղ դռները բացվում էին, հետաքրքրվելու, թե ինչն է շների իրարանցման պատճառը:

Վերջապես, մի քանի տեղ ճրագ վառեցին և սկսեցին մեզ ընդունել տները: Կարմիր-բանակայիններին տեղավորելով՝ մենք ել մտանք առաջին պատահած տունը՝ հանգստանալու: Ընկնելով մի թշվառ հյուղի մեջ, մենք չերջանիկ ելինք, վոր բաց չերկնքի տակ ու սառնամանիքում անցկացրած այնքան տանջանքներից հետո, վերջապես տաքացանք:

Այն բոլորից հետո, ինչ վոր մենք ապրել ու զգացել էինք նախորդ գիշերը, այսպիսի խրճիթում գիշերելը մեզ չերանուժյուն էր թվում: Մի քիչ բան ուտելուց հետո, պառկեցինք քնելու:

Մեռածի նման քնել եմ պինդ ու քնիս միջ լսում եմ, վոր մեկն աղաղակում է.

— Ընկեր հրամանատար, ընկեր հրամանատար,

— Հ՞ը, ի՞նչ է, — տեղիցս բարձրանալով, հարցնում եմ յես:

— Չեզ ծրար եմ բերել շտարի պետից:— Ասաց կիսամուշտակ և տաք կոշիկներ հագած մի բանակային և ծրարը տվեց ինձ: Յերբ պագցի, վոր ծրարը ձեռքումս ե, մտածեցի.

— Կնշանակի կրկին մի տեղ են քշում:

Շտապ բաց արի ծրարը և ոջախի բոցի լույսի տակ կարդացի նրա բովանդակութիւնը:

— Սա ի՞նչ ուրախութիւնն ե. վա՛, չլինի՞ նրանք հեռացել են, — ուրախացած հարցրի բանակայինին:



— Այ՛, ընկեր հրամանատար, գիշերը հալվել են, — փալլատակող աչքերով պատասխանեց կարմիր բանակայինը:

— Ի՞նչ ե, թշնամին նահանջի՞լ ե, — բացականչեց այդ

ժամանակ արթնացած Բարլումյանը և կարդաց ստա-  
ցածս գրութիւնը.

— «Բոլոր տվյալներն ասում են, վոր թշնամին  
Թիֆլիսը հանձնել և և նահանջել»:

«Հրամայում եմ ձեզ, լուսը բացվելուն պես ճանա-  
պարհ ընկնել և Տաբալսւմելա հասնելով, մնալ այնտեղ,  
գիշերել և փետրվարի 26-ի առավոտը մտնել Թիֆլիս»:

Վաշտի որապահին հրամայեցի արթնացնել վաշտը:

— Վեր կացե՛ք, վեր կացե՛ք... — Վաշտի հերթապահը  
սկսեց շրջել գյուղական տները և զարթեցնել քաղցր  
քնած բանակայիններին:

Քսան ըոպելից հետո՝ վաշտը շարք կանգնած, սպա-  
սում հը Թիֆլիս շարժվելու հրամանին:

— Առաջնորդեցե՛ք վաշտին, — ասացի Յարալովին, իսկ  
ինքս զինկոմններ Բարլումյանի և Ստրոպայի հետ, դան-  
դաղ դուրս յեկանք խճուղին: Շարժվեցինք Սպիտակ-  
Դուխանի ուղղութիամբ, ուր մեզ դեռ չերեկ լավ թափ  
եր տվել թշնամին:

Այժմ մեզ նեղութիւն տվող չկար ու մենք ուրախ  
գրուլց անելով առաջ ելինք գնում:

— Տղերք, մի ուրախ բան չերգեցե՛ք, — աղաղակեց  
դասակապետ Մալումյանը և ձայնը բարձրացրեց:


— Համարձակ մարտի կելեճեճք խորհուրդների  
իօխաճուքյաճ համար,

Ու մի մարգու պես կմեռճեճք մեճք այդ  
այայբարում:

Այսպես չերգելով մենք ժամը մեկին ցիրեկվա, հա-  
սանք Տաբալսւմելա, ուր ժողովուրդը մեզ ընդունեց մեծ  
ցնճութիամբ:

Տաքախմբելալում գիշերելով, փետրվարի 26-ի առա-  
վոտը շարժվեցինք Թիֆլիսի ուղղութեամբ ու կեսօրին  
մենք արդեն իջնում եյինք Սոլովակի փողոցով, ուր  
վոզևորված քաղաքացիները ընդունում եյին խանդա-  
վառ:

Մեր վաշտը Տիցիանովի վերելքով բարձրացավ Հավ-  
լաբար, անցավ Նավթլուղ և տեղավորվեց իրեն հատ-  
կացրած զորանոցներում:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045203

ԳՆԼԸ՝ ԶՕԿՈՊ.

[204.]

A  $\frac{I}{8348}$

745



Г. О. ОГАНЕСОВ  
КРАСНЫЙ ПОХОД  
ГИЗ ССРА 1930 ЭРИВАНЬ